

ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱԶԵ

ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

ՅԵՎ

ՊՈԵՄՆԵՐ

899.9621

Ճ-35

ՍԱՆՆԻԳԱՄԻ

Թբիթի — 1937

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԻԼԻԱ ՃԱՎԱԿԱՆՆԵ

ილია ჭავჭავაძის საიუბილეო კომიზიტი

ილია ჭავჭავაძე

არქივი ნაწერები

თარგმნილი ქართულიდან სომხურად

პროფ. ლ. მელიქსეთ-ბევის რედაქციით

წიგნი პირველი

ლექსები და პოემები

სახელგამი
თბილისი-1937

ილია ჭავჭავაძის საიუბილეო კომიზიტი

19 NOV 2017

899.962.1 ილია ჭავჭავაძე

ბ-35

სპ

ღ ზ შ ი რ ვ ე რ ყ ე რ

ქრისტიანული მითების შესახებ

მრძ. ლ. მელიქსეთ-ბევის რედაქციით

წიგნი მეორე

ქრისტიანული მითების შესახებ

სპ

სახელგამი
თბილისი-1937

20.06.2013

44.662

Պատասխ. խմբագիր՝ Լ. ՄԵԼԻՔՍԵՐ-ԲԵԿ
Տեխնիկ. խմբագիր՝ Մ. Շատովորյան
Սրբագրել և թողարկել Ռ. Պապովյան



2260
39



ԻԼԻԱ ԶԱՎԶԱՎԱԶԵ

Պատվեր 2039

Գլավիրտ 19730

Քանակ 6000

Տպագրված է Վ. Բ. Կ (Բ) Կ Կենտրոնի «Զարյա Վոստոկա» հրատարակչության
Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան կալվածքային տպարանում — Թբիլիսի, Ռուսիա-
վերու պող. № 36:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Վրաց հռչակավոր բանաստեղծ-գրող-հրապարակախոս և հա-
տարակական գործիչ Իլիա Ճավճավաձեյի հիշատակը հավերժաց-
նելու համար, նրա ծննդյան 100-ամյակի և մահվան 30-ամյակի
առթիվ՝ Վրաստանի լուսավորումի գլխավորությամբ կազմված
հորեկյանական կոմիտեն, ի թիվս բազմաթիվ միջոցառումնե-
րի, վերոշեց լույս ընծայել վրացերեն լեզվով նրա յերկերի
լրիվ ակադեմիկ հրատարակությունը 5 հատորով, իսկ ուսերեն,
հայերեն, ուկրաիներեն, թուրքերեն, արևադերեն, ռուսերեն, գեր-
մաներեն, ֆրանսերեն և անգլիերեն՝ ընտիր յերկերի ժողովածու-
ներ: Ընդ սմին հորեկյանական կոմիտեն կազմեց համապա-
տասխան հրատարակությունների ծրագրերը, վերով պիտի դե-
կավարվեյին հիշյալ ժողովածուների խմբագրությունները թե՛
նյութի ընտրության և թե՛ հրատարակության ծավալի նկատ-
մամբ:

Վրաստանի Պետհրատի հետ յեկած համաձայնության ու-
ժով՝ Իլիա Ճավճավաձեյի ընտիր յերկերի ժողովածուն հայերեն
լեզվով հրատարակվելու յե 4 պրակով, վորոնցից առաջինը պա-
րունակում է չափածո գրվածքները (24 վոտանավոր և 3 պոեմ),
իսկ մնացածները, վոր լույս են տեսնելու հետզհետե, 3 վեպերը,
այն է՝ «Միթե մարդ է՝ ազամորդի», «Ոթարանց ալբին» և «Մու-
րացկանի պատմածը» (ա. և գ.՝ հանգուցյալ Տ. Փիրուլյանի թարգ-
մանությամբ, իսկ բ.՝ Հար. Միրխանյանի):

Ներկա՝ առաջին պրակը՝ լույս է տեսնում վորոշ չափով
Վ. ԽԳՄ Հայկական Սեկցիայի անդամների մասնակցությամբ:

Թարգմանությունների մեծ մասը գրեթե նոր է, կատարված
հորեկյանի կապակցությամբ: Իսկ հին թարգմանություններից
նպատակահարմար գտանք ոգտագործելու Հայ-Արմենի (1893),



Հովհ. Թումանյանի (1907) և Գ. Ասատուրի (1931), ընդամենը 5 վոտանավոր:

Թարգմանություններն ուղղված են համաձայն Իլիա Ճավճավաձեյի յերկերի վերջին յերկու, հրատարակությունների, վոր լույս տեսան հորեկյանի կապակցությամբ Վրաստանի Պետհրատի հրատարակությամբ. մեկը՝ սերիայում «Վրաց կլասիկ գրականությունը. Ի. Ճավճավաձե. Գեղարվեստական գրվածքներ, վոտանավորներ, պոեմներ, վեպեր», XXV + 583 էջ, իսկ մյուսը՝ ալկադեմիկ հրատարակությունը՝ «Իլիա Ճավճավաձե. Յերկեր. Լրիվ ժողովածու հինգ հատորով. Հատոր I. Վոտանավորներ, պոեմներ, վեպեր», XLIII + 850 էջ: Վերջինս լույս տեսավ սույն գրքի տպագրության միջոցին:

Թե վոտանավորները և թե պոեմները դասավորված են այսպրակում, ինչպես և բնագրում, ժամանակագրական կարգով:

Ի վերջո, կարևոր է նշել, վոր «Վոտանավորներ» բաժնում գետեղած «Յերազ»-ը ալկադեմիկ հրատարակության մեջ հիմնական տեկստից հանած է և ամփոփված է հեղինակի կողմից ժըխտված գրությունների բաժնում:

ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱԶԵ

(1837—1907)

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վրացական գրող և 19-րդ դարու յերկրորդ կիսի ազգային-հեղափոխական շարժման ամենալայն ժողովրդականություն վայելող հասարակական գործիչ»¹ Իլիա² Ճավճավաձեն համարվում է վրաց ռեալիստական գրականության և արդի գրական լեզվի հիմնադիր:

Իլիա Ճավճավաձեն ծնվել է 1837 թ. հոկտեմբերի 27-ին Կախեթի Դվարեկի գյուղում (Ալազան գետի հովտում, աջ կողմը), Կովկասյան լեռնաշղթայի նախալեռնաստանի փեղին: Նրա հայրը՝ Գրիգորն՝ յեղել է ոֆիցեր, իսկ մայրը՝ Մագդան (Մարիամը)՝ Թբիլիսիի հայազն Բերուրովի աղջիկը, վորն ունեցել է 6 վորդի, այն է՝ 4 տղա և 2 աղջիկ, վորոնցից Իլիան յեղել է յերրորդը: Մայրը վախճանվել է 1848, իսկ հայրը՝ 1852 թվին:

Սկզբնական կրթությունը Իլիան ստացել է հայրենի գյուղում, ապա (1848 թվից) Թբիլիսիի մասնավոր պանսիոններից մեկում, վորտեղից 1850 թ. մտել է այսպես կոչված «Բարեծնունդ զավակների գիմնազիոնը» (Гимназия благородных детей): Վերջինս ավարտելուց հետո՝ 1856 թ. մտնում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի կամերալ բաժանմունքը, ուր հասնում է մինչև IV կուրսը: 1861 թ. հոկտեմբերի 12-ին նրան արձակում են համալսարանից:

¹ Հստ „Правда“-ի բնորոշման (1936 թ. 4. IX):

² «Իլիա» անվանը համապատասխանում է հայերենում «Յեղիա»: Հստ Հայ-Արմենի («Արաբս», 1893 թ., № 1, էջ 166) «Ելիաս»-ը ճիշտ չէ:

Ի դեպ, պետք է նշել, վոր Իլիայի գեղարվեստական յերկերի մեծ մասը՝ վոտանավորներից շատերը, պոեմներ «Ուրվական» և «Ավագակ Կակոն», նաև վեպերից՝ «Ոթարանց այրին», հենց այս ժամանակաշրջանի գործեր են, վորոնք կրում են «Պետերբուրգ» կամ «Պավլովսկ» դրոշմը:

Հայրենիք վերադառնալուց հետո Իլիան մասնակից է դառնում տեղական հասարակական կյանքին, միաժամանակ աշխատակցելով վրացական պարբերական հրատարակություններին և հարելով ազգային-հեղափոխական շարժմանը: Նա ակտիվ մասնակից է այսպես կոչված «Թերգդարեութա», այսինքն՝ «Թերգի» (Տերեկի) ջուրը ճաշակողների՝ խմբակի, վորն ակտիվ դեր էր խաղում վրաց կյանքի մեջ, իր հուժկու ձայնը բարձրացնելով, ի միջի այլոց, ցարական Ռուսաստանի ճորտատիրական կարգերի դեմ:

1863 թ. Իլիան ամուսնանում է Գուրամիշվիլու աղջիկ Ուգայի հետ և այսուհետև կապվում է Սագուրամո գյուղի հետ, ուր գտնվում էր վերջինիս կավածքը:

1864 թվից Իլիան մտնում է պետական ծառայություն, նշանակվելով Քութայիսի գեներալ-նահանգապետի կից առանձին հանձնարարությունների պաշտոնյա, և նույն թվին փոխադրվում է Դուշեթի գավառի հաշտարար միջնորդի պաշտոնի: 1868 թվին նույն Դուշեթի գավառի հաշտարար գատավորն է, ուր մնում է մինչ 1875 թ.:

1875 թ. Իլիան թողնում է պետական ծառայությունը և անցնում ազնվական-հոդային բանկի վարչության նախագահի պաշտոնի, ուր և մնում է մինչ 1905 թ.: Միաժամանակ՝ 1886—1907 թ. թ. Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերության նախագահն էր և, բացի գրանից, վրաց թատրոնի վարչության նախագահ (մի քանի անգամ), վրաց ազնվականական գիմնազիայի և Ծինամձղվարիանթկարիի գյուղատնտեսական դպրոցի վարչության անգամ, նաև՝ 1877 թվից՝ Կովկասյան Տնտեսական Ընկերության փոխ-նախագահ:

1906 թ. ընտրվում է Պետական Խորհրդի անգամ, այդ պաշտոնում մնում է մինչ վոդբերգական մահը (սպանությունը), վորը տեղի ունեցավ 1907 թվի ոգոստոսի 30-ին, Ծիծամուր գյուղի մոտ՝ Սագուրամո տանող ճանապարհին:

Իր գրական գործունեությունը Իլիա Ճավճավաձեն սկսել է 1857 թվից՝ վոտանավորներ գրելով (թեև նա ունի և այս թվա-

կանից առաջ գրված պատանեկական գրվածքներ): Նա աշխատակցել է «Ցխկարի», «Սաքարթվելու մոամբե» և «Մոամբե» հանդեսներին, «Կրեբուլի» ժողովածուին, «Դրոբրա» թերթին: Նա հիմնադիր է և խմբագիր «Իվերիա» ամսագրի, վորը լույս էր տեսնում 1877 թվից մինչ 1886 թ., իսկ 1886 թվին որաթերթի վերածվեց: Վերջինս 1902 թվից՝ այլ և այլ խմբագիրների ձեռքն անցնելով՝ իր գոյությունը պահպանեց մինչ 1909 թ.:

Իլիա Ճավճավաձեն հեղինակ է բազմաթիվ գեղարվեստական յերկերի՝ թե՛ Հավածոյի (պոեմների և վոտանավորների) և թե՛ արձակի (վեպերի), նաև հրապարակախոսական գրվածքների և այլն:

Թաղված է գրողների պանթեոնում՝ Մթածմինդայում:

Լ. Մ.-Բ.

ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

ՂՎԱՐԵԼԻԻ ԼԵՌՆԵՐԻՆ

Լեռներ հայրենի, յես հեռանում եմ ձեզանից ահա,
 Բայց յերբեք - յերբեք ձեր ազատությունն յես չեմ մոռանա:
 Դուք միշտ կըշրջեք ինձ հետ, անբաժան, վորպես սիրտը իմ,
 Վոր ձեզ հետ, լեռներ, կապված ե հավետ բընությամբ նըրբին:
 Հիշում եմ յես դեռ, յերբ մանուկ եյի հագիվ գիտակից,
 Ձեր տեսքը հըսկա ինձ դող եր ազդում, սարսուռ անծկալից...
 Վախի դող չեր դա կամ վախից ծընված ցըրտաշունչ սարսուռ,
 Յեվ վոչ ել սըրտի մանկական թըրթիռ վարանոտ ու թույլ:
 Յես դիտում եյի յերկինքը կապույտ հուզմունքով մի վեհ,
 Յեվ մանուկ սըրտումս անչափ կարոտում բարձունքներին ձեր:
 Ու ամպերն, ասես, սիրտ չեյին անում սըլանալ առաջ,
 Ուր լըսում եյիք հըպարտ փոթորկի աղմուկն ու շառաչ:
 Ուր յերկնի մովում արագիլների յերամը կորած՝
 Սավառնում եր դեպ գագաթները ձեր այդ յերկնասըլաց:
 Ո, ինչպե՞ս եյի յես լուռ կարոտում պարզությամբ մանկան
 Մըրըրկե՛լ անսանձ ձեր ահեղաշունչ փոթորկի նըման,
 Յեվ կամ ունենալ թեվերը հըզոր արծըվի ազատ,
 Վոր սըլանայի՝ շոշափելու ձեր գագաթը հըպարտ:

Յերբ մութ ձորերում մըռնչում եր հար քամին կատաղի,
 Վորպես վիրավոր առյուծ մի ահեղ՝ մըռնչում արի, —
 Մըռնչունը այդ թըվում եր սըրտիս հարազատ այնպե՛ս,
 Վոր տերեվի պես, ինչ-վոր մի հույզից, դողում եյի յես:
 Յես չեյի ըզգում արժեքը դըրանց մանուկ որերին,
 Պարծենում եմ այժմ, վոր ծընվել եմ յես, լեռներ մըտերիմ,
 Ձեր այդ ջերմ գըրկում, վորպես բընության զավակ առնացի՝
 Անած փոթորկի ու կայծակի մեջ, վորպես վըրացի:

Յերբ ցամլն ու վիշտը ճրնշում եր անոգ իմ սիրտը մանուկ,
Ձե՛զ եյի դիմում՝ անխոս թափելով հորդառատ արցունք,
Թեյեմ դուք միշտ ել անգոր եք յեղել, լեռներ հայրենի,
Ամոքել վիշտն իմ թե՛ այն ժամանակ, թե՛ նույնիսկ հիմի:
Յեմ անցած-կորած իմ անուրջների հուշերն աննրման
Սըրտումըս պահած՝ կրտանեմ սիրով մինչեմ գերեզման...

Սիրո՛ւմ եմ յես ձեզ, ո՛ր, մրտերիմներ դուք իմ մանկության,
Բայց գալիք կյանքին պարտք ունեմ տալու, պարտք մի սրբազան
Վոր պահանջում ե բաժանվել ձեզնից, լեռներ ու կամա՛ր,
Դրբանից ծանրը զոհաբերություն չըկա ինձ համար:
Ձիուս մեն-մի քայլն անվերջ մեր միջի անդունդն ե ձրգում,
Թըռչում են արագ ըռպեններն, ու յես վորք եմ ինձ ըզգում...
Յեմ կամաց-կամաց գազաթները ձեր ծածկվում են ահա,
Յե՛վս մի ակընթարթ, ու տեսնում եմ լոկ յերկինքն արեմկա:
Ձո՛ւր ե հայացքն իմ պայքարում հըսկա տարածության դեմ,
Յեմ զո՛ւր եմ թարթում աչքերըս թախծոտ — փրնտու՛ւմ
տըխրադեմ...

Ել չե՛ն յերեմում ձեր գազաթները սեզ ու վեհափառ,
Ել չե՛ն զարդարում յերկնակամարը բիլ ու շողափառ...

Ո՛ր, մընա՛ք բարով, հեռանում եմ յես արցունքն աչքերիս,
Բայց սիրտըս ձեզ հետ կապված կըմընա ոտարությունից.
Հեռու աշխարհից դեպ ձեզ կըծրգտի իմ հոգին հավետ
Յեմ կըթըռթըռա նորից ու նորից հույզով սիրավետ:

1857 թ.

Թարգմ. ՅՆ. ԴԱԼՃՅԱՆ

ԳԱՐՈՒՆ

Ձա՛ն, յեկավ գարուն,
Ծաղկով զարդարուն
Յեմ հետը բերեց
Յերկնից խընդություն:

Կանաչով պատեց
Այգի ու պարտեզ,
Սարեր ու դաշտեր
Ծաղկել են պես-պես:

Գընից արթնացած—
Նորից կյանք առած—
Հըրճվում ե, խընդում
Ամեն արարած:

Այնտեղ ծիտիկը
Ծըլվըլում ծառին,
Այստեղ սոխակը
Յերգում ե վարդին:

Թիթեռնիկն ահա
Թառել մի ծաղկի՝
Ծըծում ե նրա
Հյութը բերկրալի:

Իսկ այնտեղ նազով,
Սառնորակ ու զով

Առուն քրքրչում,
Կամաց քրփրչում,

Խայտում ե կայտառ
Ջրերով պայծառ
Ու կանչում եսպես՝
«Ել սառած չեմ յես»:

Ժանտ ծրմռան ձեռին
Գերի ջրերի
Սառուցն ե հալվել,
Իսպառ ազատվել,

Իր ձենն ե խառնել
Յերկրի խընդության
Ու գովքն ե յերգում
Վեհ ազատության:

Ամեն ինչ ծաղկում,
Նոր շունչ ե առնում,
Ես բաղցրոր որից՝
Կյանք առնում նորից:

Յեւ միայն սիրտը
Մի անգամ մեռած՝
Նո՛րից չի՝ խընդա,
Զի՛ կենդանանա:

7 մարտի 1858 թ.
Պետերբուրգ

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծ Ի Տ Ը

Յերգում եմ, յերգում
Յեւ ուրախանում,
Վոր իմ յերգերով
Աշխարհն ե հրընվում:

Իմ գործն ե՝ անվերջ
Յերգել ու յերգել,
Ազատ ողի մեջ
Ճախրել անարգել:

Աշխարհըն իմ դեմ
Լայն ե ու արծակ,
Ուրախ թրռչում եմ,
Ճախրում համարձակ:

Ուր ել ուզում յես՝
Կարող եմ թրռչել,
Շրնորհք ունեմ վես
Յեւ հրկուն թեվեր:

Յերկնի լազուրում
Յես կուլ եմ գրնում,
Կանաչ անտառում
Իմ բունն եմ դրնում:

Գիշերը հանգիստ
Քրնում եմ ծառին,

Ծեղըն ավետում
Յերգով աշխարհին:

Յեվ յերբ արեւը
Գլուխն ե հանում,
Կանաչ տերեւը
Յողից ազատվում:

Թեւերս եմ պարգում,
Հանույքով ծրգվում,
Վոտիկըս շարժում,
Աչիկըս թարթում:

Նայում եմ ծընող
Հարազատ յերկնին,
Հետո ինձ պահող
Մար ու դաշտերին:

Ապա սիրելի
Իմ զույգ թեւերին...
Իսկ հետո խաղով,
Յերգով ու տաղով:

Թըռչում եմ շտապով
Դեպ յերկինքը մով,
Սրլանում վոնց նետ
Ու կորչում անհետ:

Քանի դեռ ազատ
Կյանքս ե այսպիսի՝
Միշտ կըլնեմ սիրված
Հյուրը մայիսի:

Իսկ յերբ խաբելով,
Թեւըս կապելով
Գրցում են վանդակ—
Ել մընա՛ք բարով,
Դաշտեր ընդարձակ,

Ձեք լըսի աշխույժ
Յերգըս համարձակ:

Տըխուր, վըշտացած,
Թեւերըս թափած
Կըսկըսեմ թոշնել,
Մահվանըս սպասել...

Յեվ շուտով դաշտեր՝
Ձայնիս կարոտած,
Պըստիկ ծըտին ծեր
Կըտեսներ մեռած:

Մարդու միտքն ի՞նչ ե,
Վոր թեւս ե կապում.
Ազատությա՞նս ե
Արդյոք նախանձում...

Չ մարտի 1858 թ.
Պետերբուրգ

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մ Ա Ճ Կ Ա Լ

«Գրնա և արի, իմ գութան,
Ղերդիտա*, ձայն տուր դու նըրան»:
Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

Մենք մի բախտ ունենք, Լաբա*, յեզր ջան,
Սեզ հողին միայն մեզ արին արժան...
Դե՛հ, խոնարհ-խոնարհ մեր լուծը քաշենք,
Մեր ուրախագուրկ որերը մաշենք.
Խորը, չոր հողում գութանը խորենք,
Ու վըրան անծրեզվ բըրտընքի ցողենք:
Մի՛ տըխրիր, Լաբա... Քո լուծն, յեզր ջան,
Ծանրը չե իմից և վոչ ել դաժան:
Ցես քեզ պես հողին աչքըս եմ տընկել,
Ցերք ինձ յերկրնքից զըրկեցին, ընկեր,
Հողն ե քսպասում ինձ ել, քեզ նըման,
Ցերք յես ել մահով տըրվեմ մոռացման...
Գուցե նախանձում, դու այն ես ասում,
Թե ինչու՞ ինձ պես դու ել չես ասուն...
Ի՞նչ կանեմ յես թուր, թեկուզ սուր ե նա,
Թե արդար գործի համար բըթանա:
Կամ ինչի՞ն ե պետք այն գութանը մեզ,
Վորով լոկ պիտի հողը բըչփորես
Ցեզ վորը սերմի անման խանգարող
Խոտն արմատահան անել չի կարող:
Իմ սըրտի միջում հոգս ու վըշտերի,
Մարդկային հոգու մեծ յեռ ու զեռի

Խոսքեր են ծընվում, բայց խոսքերն ունայն
Իմ սըրտի մեջ իսկ մեռնում են անձայն:
Դու չես հասկանա տանջանքն ասունի,
Ցերք ազատ խոսքի իրավունք չունի...
Ո՛հ, այդ միջոցին իմ լուծն, յեզր ջան,
Շատ ծանր ե քոնից, շատ ծանր ու դաժան:
Ել ի՛նչ ես տըրտում... Քաշի՛ր ու քաշի՛ր,
Տա՛ր գութանը, տա՛ր, մինչեզ ծայր հասի՛ր,
Քո հին ընկերոջ մի՛ դավաճանիր,
Նա քեզ կըպահի, դու նըրան պահի՛ր...

4 հունիսի 1858 թ., Պետերբուրգ
(վերջին խմբագրությունը 1863 թ.):

Թարգմ. Գ. ԱՍԱՏՈՒՄ
(1931)

ՎՐԱՑՈՒ ՄՈՐԸ

Ներկան՝ անցյալից ծնված,
Ծնող և ապագայի:

ՂԵՑՔՆԵՑ

Ո՛ր, մայր վերացու, քո ծիծը հընում
Ծեր ազգի համար վորդի յեր սընում
Յեւ որորիդ հետ տըրտունջը լեռան՝
Ապագա հերոս ընծայում նըրան...
Կորան այն որերն... Վիշտը լեռնացած,
Ծանըր լրծի տակ բախտը մեր հընշված —
Վերջ տըվեց կյանքիդ ույժին վառվրուռն,
Ստըվերի փոխեց քո հերոս վորդուն:
Ասա՛, վորտե՞ղ են կորել պապական
Յեռանդըն, ույժը, սուրը պատվական,
Անունի համար պայքարը հրպարտ
Յեւ վոսոխի դեմ կըռիվըն անպարտ:
Եւ չարժե սըգալ այն, ինչ վոր թաղվել
Յեւ ժամանակին գոհ ե գընացել՝
Մոռանանք մենք եւ վիշտըն անցյալի...
Այս նոր ու պայծառ աստղին հետեւենք.
Մենք պիտ ապագան կերտենք պանծալի
Յեւ ժողովըրդին նոր կյանք պարգեւենք...
Այստե՛ղ ե, ահա, մա՛յր, քո անմեկին
Կոչումը վըսեմ, պարտքը յերկնային.
Մեծացրու վորդուդ, ույժ տուր իր հոգուն
Յեւ վորպես սընունդ՝ պատգամըն աստծո, —
Ներշնչիր նըրան սիրել մարդկություն,

Ընկեր, միություն և ազատություն, —
Վոր միշտ բարություն գործել ցանկանա
Յեւ սեւ բախտի դեմ կըռվել գիտենա...
Կըծաղկի տունկն այդ, ո՛ր, ինձ հավատա,
Յեւ գործիդ վայել պըտուղներ կըտա:
Ծա՛յր, լըսիր ուշով խընդիրքը վրացու՝
Դու քո զավակին այնպես մեծացրու,
Վոր առաջնորդի նրան գործըն արդար
Յեւ մի հետք թողնի լուսավոր, պայծառ:

15 դեկտեմբերի 1858 թ.
Պետերբուրգ

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

* * *

Յեւ շատ եւմ տանջվել, և գիտեմ, ելի
Սպասում են ինձ նոր տանջանքներ ու վիշտ,
Բայց այս չե պատճառն այն արցունքներին,
Վոր իմ աչքերում փայլփրլում են միշտ:

Ո՛ր, կրդիմանամ ամեն փորձության,
Թե փրշրվեն ել հույսերըս անգին—
Նույնիսկ սիրելույս դավաճանության
Յեւ իմ սեւ բախտի գոռ հարվածներին:

Յեւ կրդիմանամ ինչպես ժայռ կանգուն.
Մի՞թե սովոր չեմ բախտի հետ կրովել,
Միայն իմ անձի վոչնչությունը,
Յեղբայրներ՛ր, յերբեք չեմ կարող տանել:

26 դեկտեմբերի 1858 թ.

Պետերբուրգ

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ն Ա Ն Ա

Մանա, բալիկ, բունդդ առ,
Արդյոք ինչի՞ց վախեցար,
Ինչո՞ւ, բալիկ, աչքդ թաց՝
Ինձ նայեցիր վախեցած:
Դեռ հո՞ բախտդ նախորդ,
Նախագգացումն անողոր
Ձեն պատկերել բրնածիդ
Ինչ պարտք ունի վրացին:
Հապա ինչո՞ւ վախեցար,
Նանա, բալիկ, բունդդ առ:

Յերեխա յես բանի դեռ,
Ժամանակը մինչ կըզա,
Շտապիր, բալիկ, դու բրնել,
Շտապիր հանգիստ դու մրնալ:
Կրզան որեք առնական,—
Բազուկներդ կրկոփվեն,
Յերազներդ մանկական՝
Պայքարների կրփոխվեն:
Այնժամ չընկճվես դու անուժ,
Նանա, բալիկ, իմ անուշ:

Հայրենիքից կըլըսես
Բախտահալած ճրնշվածին,
Նըրա վողբը աղեկեզ՝
Աղերսանքը լալագին.
Յեւ ինձանից դու որհնված,
Վորդի, սիրտդ կըհուզվի,

Մորըդ որոր քեզ ասած,
Սըրի շաչի կըփոխվի:
Այնժամ չընկնվես դու անուժ,
Նանա, բալիկ, իմ անուշ:

Մեր սեւ բախտը կըտեսնես,
Միությունը մեր կորցրած,
Քաջությունը առերես,
Հայրենիքը վորբացած...
Սիրտըդ վառի՛ր դու կրակով
Ան-սարսափ բե՛ր թըշնամուն,
Վորպես վորդի ջատագով՝
Հայրենիքիդ զոհվի՛ր դու:
Այնժամ չընկնվես դու անուժ,
Նանա, բալիկ, իմ անուշ:

Քննրույ՛ջ սիրտը մայրերի
Ամրանում ե, կարծրանում,
Ինչի՞ս ե պետք այն վորդին,—
Թե հայրենյաց չի զոհվում:
Հայրենիքի պետքերին
Ով իր վորդուն չի տըվել,
Վա՛յ այն մորը՝ թըշվառին,—
Նա իր վորդուն չի սիրել:
Յես յերբեր չեմ թերանա,
Նանա, բալիկ, նանինա:

Հայրենիքիս համար յես
Ծիծ եմ տալիս ահա՛ քեզ,
Վոր անձնուրաց պայքարես
Յեվ յերկիրը բարվոքես...
Թո՛ղ մոր ծիծը բաղցրածոր
Նըրա համար թույն լինի,
Հայրենիքի համար ով՝
Քալիք մահը զանց առնի:
Դու յերբեր չես թերանա,
Նանա, բալիկ, նանինա:

Դիտցի՛ր՝ մահը այդ տեսակ
Մեծ ե, պայծառ, վեհապանծ,

Անմահ ե միշտ զավակը
Հայրենիքին զոհ յեկած:
Հայրենիքի համար քեզ
Են յերկինքն ե ուղարկել,
Ու քաջի պես թե ընկնես
Վորպես տղամարդ անվեհեր՝
Մըխիթարանք կըզգամ յես,
Նանա, նանա, իմ բալես:

Հայրենիքիդ կըժըպտաս
Վորդի, շունչըդ փըչելիս,
Վոր քեզ արյուն պարգեված՝
Նորից նրան ես հետ տալիս:
Կըվերջանաս ժըպտալով
Հայրենիքիդ սըրտակից,
Վոր այդ հերոս քո մահով՝
Նրան փըրկեցիր դու մահից:
Այնժամ խընդա՛ ու ժըպտա՛,
Նանա, բալիկ, նանինա:

Թե վոր այդպես մահանաս,
Հարկավոր չե՛ քեզ արծան,
Հավետ անմահ կըմընաս՝
Վորպես արցունք մայրական:
Իմ որորը սա յե, տե՛ս,
Վորդի, դու լա՛վ գիտակցի՛ր,
Ինչ յես խոսքով ասի քեզ,
Դու քո գործով կատարիր:
Նանա, վրացի, իմ փոքրիկ,
Կանչում ե քեզ հայրենիք:

13 ապրիլի 1859 թ.
Գետերբուրգ

Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎԶԵՆ

Ե Լ Ե Գ Ի Ա

Լուսինն աղոտ լույս է փրռում
Իմ աշխարհին մայրենի,
Կուլ է գրնում կապույտ հեռվում
Ճերմակ շարքը լեռների:

Ձեն չի գալիս վոչ մի կողմից,
Վրաստանը մութն ու լուռ.
Վրացին է հաղթված բռնից
Տընքում տանջված ու տրխուր:

Մենակ եմ յես... Քրնած է նա,
Քրնած շուրջըս ու հեռու...
Ա՛խ, աստված իմ, բընա՛ծ, բընա՛ծ
Յե՛րբ է արդյոք զարթնելու...

4 հունիսի 1859 թ.
Պետերբուրգ

Թարգմ. ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
(1907)

ՔՈՒ ԱՓԻՆ

1. Մաղախաժիւռն

Հայրենի գետ, արթնած հազիվ հազ դարձյալ,
Լսում եմ անա խոխոջյունը մոռացյալ.
Ալիքներիդ խաղը սիրտս է կրտրտում,
Ունկրն դընել բեզ կարող եմ լոկ տրտում:

Ահա նորից բացվում է իմ հին վերքը,
Յալն հեգ ազգիս, յերբեմն հուժկու յուր ծեռքը...
Կարծես թաղած են կոհակներդ այս անեղ
Սեգ լեռներիդ պերճության փայլն փառահեղ:

Այն որվանից այդ քո շրքեղ անցյալի՝
Հազիվ մընաց նըշույլն անգամ անձկալի...
Դե՛հ, խոխոջոց գետ հայրենի փառավոր,
Տար անցյալին իղձն իմ ցավեր բյուրավոր.

3 հոկտեմբերի [1859 թ.]
Թբիլիսի

Թարգմ. ՀԱՅ-ԱՐՄԵՆ
(1893)

ԱԼԱԶԱՆԻՆ

Ծաղիկն իմ վառ ջահելության
Թռչնեց որերի ընթացքով:
Վերջ տրվեց ամեն ցանկության
Ընթացքն այդ սիրտըս խոցելով:
ՍԱԲԱ ՈՐԲԵՂԻԱՆԻ

Գետ, հայրենիքիս լեռներից հոսող արցունքից ծնված,
Ահա քո ափին կանգնած նայում եմ քեզ, ընկեր սիրած.
Նայում եմ վրշտոտ և քո մեջ փրնտոում որերն իմ անցած:
Կյանքի պրտույտով քո ալիքներում կրկանված, թաղված:
Իմ դեմ ամեն ինչ հիշեցնում ե ինձ այն՝ ինչ կորցրել եմ,
Յեւ այն, վորի վիշտն յես իմ սրտի մեջ խորը թաղել եմ...
Ահա այն կաղնին, վորի ստրվերում միասին նրստած:
Խորհում եյինք մենք՝ յես և նա, վոր եր իմ կյանքի աստված:
Նայում եյինք քեզ, իսկ դու փոթորկում և հուզվում եյիր,
Յեւ մեր սրտերն ել քեզ հետ միասին փոթորկում եյին.
Նայում եյինք մենք, զորավում եր մեզ ալյաց խենթություն,
Բայց այնժամ չեյինք փրնտում նրբանց մեջ համեմատություն.
Ինչների՞ս եր պետք այնժամ ապագան, յերբ ներկան անգին
Նազում եր այնպես, ինչպես վաղորդյան ժրպիտը նրբին:
Բայց ըոպեյական խինդը մեր սրտի շատ շուտով անցավ,
Յեւ կուրությունը վառվրումն սիրո ցրնդեց, վերացավ...
Խրվեց ամեն ինչ, հեռացավ բախտն ել թեթեւ ժրպտացող,
Հեռացավ այնպես, ինչպես ալիքըդ աշխույժ խայտացող...
Դու ել յես փոխվել, ո՞, իմ Ալազան, կաղնին չորացել,
Յես ել վաղաժամ հերմակել եմ արդ, մաշվել, ծերացել...
Ո՞ւր ե այն աստվածն, այն զգացմունքներն, ո՞ւր ե սերըն այն,
Ամեն ինչ կորավ, ինչո՞ւ չեն կորչում հուշերըս ունայն:

1859 թ.

Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՅԵՐԱԶ

Ֆեղրա՛յր, կարոտով,
Վառվրումն սրտով
Ինչ վոր կուզեյի
Տեսնել յես կյանքում
Տեսա անձկալի
Մի վառ յերազում:

Տեսա յերազ մի,
Ո՞հ, այնքան անուշ —
Զըքնաղ, հայրենի
Կողմերը քրնքուշ —
Կուզեյի գըրկել
Լեռը հին ծանոթ,
Կարոտով լըսել
Վրացու ծայրը մոտ,
Դուրգուրել, բըռնել
Ճաճանչն արեւի —
Տեսա հայրենի
Դյուղը լեռան տակ,
Ելի վաղեմի
Տեսքով իր հրատակ:
Տեսա այն տունը,
Ուր անցրել եմ յես
Իմ մանկությունը.
Յեւ ի՞նչ տեսա յես —
Թախտին նրստած կին՝
Արցունքն աչքերին.

Հարցրի ինքրս ինձ՝
 Ով ե լացող կինն.
 Արդյոք նա՞ յե, թե՞...
 Ծաղկի ստվերն մի՞թե
 Կարող ե նույնպես
 Փայլել ծաղկի պես:
 Ծանոթ եմ թե՞ վոչ
 Լացող այս կընոջ,
 Վոր իմ սրբախ մեջ
 Հուր վառեց անշեջ:
 Յերկար ժամանակ
 Արցունք եր թափում,
 Վրշտով համակված
 Ա՛խ բաշում, տընքում.
 Հետո նա բացեց
 Շուրթերն անարյուն
 Յեվ արտասանեց
 Վաղուց մոռացված,
 Իմ կորած անուն:
 Հենց այդ լրսեցի՝
 Ձեռքս պարզեցի,
 Ո՛, նա՛ յեր, նա՛ յեր,
 Ուզեցի գրկել
 Յեվ կըրծքիս սեղմել...
 Բայց նըրա տեղակ
 Իմ մահնակալի
 Մառն յերկաթին
 Ձեռքս դիպցրեցի,
 Յեվ յես զարթեցի:
 Այդպես յերազում
 Անուրջներ տեսնում՝
 Յերջանկանում եմ,
 Մինչ սառն կյանքին
 Հանկարծ հանդիպում
 Հիասթափվում եմ:

1859 թ.

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

ՔՆԱԾ ԱՂԶԻԿԸ

«Շայտում յեմ յես բեզ՝
 Հանգիստ քնածիդ,
 Նայում սիրակեզ,—
 Բյուրեղյա կըրծքիդ:
 Հեվքն եմ լըսում
 Կըրծքիդ այդ շարմաղ
 Յեվ հանգիստ հուզում՝
 Սրբախ այդ մատաղ:
 Կարմրել են, շողում
 Բընքույշ այտերըդ,
 Ժրպտում են, դողում
 Լալ շըրթունքներդ:
 Բընած ես հանդարտ,—
 Յերկնի մովի պես,
 Հրեշտակն ել վըրադ
 Փարվել ե անտես:
 Անբիծ ես, անգին,
 Հեվք ունես դու հե՛զ,
 Յերնեկ նրա բախտին՝
 Ում կըպատահես...

19 հունիսի

1860 թ.

Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎԶՅԱՆ.

Մ Շ Ա Կ Ը

„В труде проходит жизнь его
И не приносит ничего“.

I

Թբիլիսիի մեջ, Միջի փողոցով*, կեսօրվա տապին
Անցել եմ հաճախ... տեսել եմ յես բեզ, իմ մրջակ անգին՝
Պատի տակ պառկած, արեվի այն բարկ շողերի ներքո.
Քո մրմնջոցը հաճախ իմ սիրտը ծածկել ե վերքով:
Այդ տրխուր ծայնում ըզգացվում եր վողջ քո կյանքը խավար
Ցեվ ամենորյա չարչարանքը քո՝ սեվ հացի համար:
Ո՞վ ես դու, ասա՛, վո՞ր տեղացի յես, յեղբայր թանկագին,
Փախել ես գյուղից, վոր չես դիմացել տիրող մըտրակին.
Հեռացել ես դու քո տուն ու տեղից, քո ընտանիքից,
Դաշտ ու արոտից և թե՛ հարագատ քո հող ու ջրից.
Կամ մի գուցե բեզ դավաճանել ե բախտըն անիծյալ,
Դայթակղել ե կամ մոլորեցրել փառքով կարծեցյալ:
Ինչո՞ւ յես ընկել... Ինչ վոր կորցրել ես, այնտեղ ես թողել՝
Նըրա փոխարեն Թբիլիսիի մեջ դու ի՞նչ ես գրտել...

II

Ահա դու նորից ծրուել ես մեջքդ ծանրը բեռան տակ,
Ազնիվ ճակտիցդ քրտինք ես թափում, խըղճալի՛ եյակ,
Մեջքդ կուտակված խըռովյալ հոգուդ հեվքըն ե լրսվում,
Դընում ես, ո խե՛ղճ, և բեռանդ տակ ծունկըդ ե ծալվում...
Ո՞վ կըխըղճա բեզ... Ահա գալիս ե մեծատան դրոշկան*.
Անփուլթ, անտարբեր սրլանում ե նա քո դեմ-հանդիման.

Ահա հասավ բեզ, տապալեց գետին կրճուճի նըման...
Քե՛զ, մարդ աստրծո, վորպես աննըշան ու չընչին մի բան,
Դու բեռանդ հետ վայր ընկար գետին, և անցորդները
Քո թըշվառության վըրա սկըսեցին բարձրը հրահրուալ...
Տըխուր աչքերդ արտահայտեցին վողջ ապրումներդ,
Քո լրուության մեջ աստծո անսահման բարկությունը կար:
Այդ նույն լրությամբ մոտեցար նորից, բաշեցիր բեռից,
Կապտեց դեմքդ վողջ, կայծեր ցայտեցին քո զույգ աչքերից.
Ձե՛ս կարողանում, վարձըդ կորչում ե... Ո՛, շատ ես հոգնել...
Մարդիկ նայում են, բայց և վո՛չ մեկը չի ուզում ոգնել...

III

Ահա տեղ հասար, խըղճուկ, իջեցրիր բեռդ ուսերից,
Շինելի* փեշով քրտինքն ես սրբում ազնիվ ճակատից.
Հեվում ես, ծըծում լայն կըրծքով ողը դու ազահորեն —
Սպասում ես, ո խե՛ղճ, քո չոր պատառն տիրող ձեռին ե...
Հաճախ չի ուզում այդ չընչին վարձն ել լըրիվ վըճարել
Քե՛զ, վոր սոված ես, մերկ ես ու թըշվառ, անտուն ու անտեղ...
«Մի՛ կրտիր հացըս, — ասում ես նըրան, — նայիր աստծուն ել,
Այդ պատառ հացը յես անասնական ջանքով եմ գընել»:
Դու անգոր ես... Ո՛, չե՞ վոր թույլերին չեն առնում հաշվի,
Հարստին գուցե ավելի յեւ տա, իսկ բեզ կըխաբի.
Ով կարիք չունի, նըրան ճաշ կըտա բեզնից խըլածով —
Քեզնից, վոր մի որ կարող ես ապրել չընչին զըրոշով:
Այդպես, պատրժված անարդարացի՝ շատ անգամ կըզաս,
Դուլսըդ կըղընես բեզնից անբաժան փալանիդ վըրա
Ցեվ բուն կըմըտնես այն մըտածմունքով, վոր վաղը՝ նորից
Չարչարվես պիտի, որդդ անց կացնես վոչ լավ այս որից:

IV

Այդպես անխընդում դեհ անց կըկենան որերդ բոլոր,
Ցեվ մարդավայել դու սկի չե՛ս ապրի, յեղբայր, վո՛չ մի որ...
Հետո ո՞վ գիտի, թե վո՞ր նըկուղում, վո՞ր ներքնահարկում
Քեզ կըհարվածի այն որհասական ցավըն ահարկու:
Ընկած կըլինես մենակ ու անոգ չոր հարդի վըրա
Ցեվ վերմակի տեղ ուսի փարաջան* կըծածկես վըրադ:
Մենակ կապրես դու և մեն-մենակ ել, յեղբայր, կըմեռնես,
Ձի լա քո կինը դիակիդ վըրա արցունքներով կեզ,

Ձեն լա, չեն գրրկի թրշվառ, վորբացած զավակներդ քեզ,
Իգուր դու նըրանց կողմըն՝ մեռնելիս ձեռդ կրպարզես:
Յեվ հենց վոր մեռնես՝ շտապով կըղընեն քեզ պատգարակին,
Առանց արցունքի կըհանձնեն հողին, յեղբայր թանկագին.
Այդպես զուր տեղը դու կըփրչանաս... Աշխարհում այս սին
Վոչինչ չի լինի, վոր մեկ հիշեցնի քո կյանքի մասին:

12 հուլիսի 1860 թ.

Պավլովսկ

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Յես չեմ յերգում լոկ յերգելու,
Ինչպես թրուշուն չընաշխարհիկ—
Սիրուն ծայնի համար միայն
Աշխարհ գալու չըկար կարիք...

Յես յերկընքից եմ ընտրված,
Յես, հողասունն, հողի վորդին,
Յեվ աստըծուց պատգամ ունեմ՝
Առաջնորդել ժողովրդին:

Սրտումս ենդուր ե բորբոքվում
Աստվածային հուրը անշեջ,
Վոր ծայնակից ժողովրդին
Լինեմ խընդանք ու վըշտի մեջ:

Վոր նրա ցավըն իմ ցավ լինի,
Նրա տանջանքըն հոգիս տանջե,
Սիրտըս ցընծա նըրա բախտով,
Դժբախտությամբ խոր թառանջե:

Յեվ յերբ հանկարծ կայծն յերկնային
Բրուընկեցնե հուրն իմ սըրտի,
Յերգեմ այնժամ, և իմ յերգում
Հընչե հոգին ժողովրդի:

23 հուլիսի 1860 թ.

Պավլովսկ

Թարգմ. Դ. ԱՍԱՏՈՒԲ
(1931)

* * *

Ըրդթաները փըշըրվելու
Ձայն եմ լըսում ամենուրեք,
Արդարության ծայնը հըզոր
Հընչում ե վեռ, աշխարհով մեկ:

Համակում ե ծայնը վեհուժ,
Հույսի ակունք սըրտիս բանում...
Արդ, տեր աստված, ծայնը անուշ
Լըսել կուզեմ իմ վաթանում:

29 հուլիսի 1860 թ.
Պավլովսկ

Թարգմ. ՎԱՐԴ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՎՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Թե մեծացնի մայրն իր վորդուն, —
Նա մեզ նըման պետք ե լինի,
Յեղբայրաբար հարկավոր ենք
Ամեն տեղ ու ամեն բանի:

Խընդացողին ընկեր լինենք
Յեվ թըշվառին մենք սըրտակից,
Դատողության ու գործի մեջ
Յետ չենք մընա իմաստունից:

Մեծերից չենք վոտնահարվի
Փոքրին կըզանք միշտ ոգնության,
Ույժին ուժով կըդիմադրենք,
Կերկըրպագենք արդարության:

Առաջ գնալիս չենք նահանջի,
Չենք ել թողնի յետ մնացածին,
Մենք ել գիտենք ոգնել ե պետք, —
Ուժասպառին յեվ ընկածին:

Մենք անարատ գնում ենք առաջ
Յեվ մըտածում անվերջ ու լուրջ, —
Առաջ գնացողն յետ ընկածին
Պետք ե լինի ճամբա, կամուրջ:

Հայրենիքի վորդիք ենք մենք,
Ուժ ե առնում մանուկ հոգին,

Վոր մի անգամ հարկավոր զանք
Մեր վորքացած հայրենիքին:

Բայց հիմա ել գործով, ուժով
Մենք ուրիշից յետ չենք մընա,
Հայրենիքը թե կոչ անի,
Դեպի պայքար կերթանք հիմա:

Այսպես, ահա, հարկավոր ենք
Ամեն տեղ ու ամեն բանի,
Թե մեծացնի մայրն իր վորդուն՝
Նա մեզ նրման պետք ե լինի:

1860 թ.

Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎԶՅԱՆ

*
*
*

Ֆերբ ինձ թախիծն ե մաշում անսահման,—
Չեմ ձրգտում գըտնել մարդկանց մեջ սփոփանք,
Ազատ, հասարակ, իսկույն ինքն իրան,—
Յերզն ե այցելում ինձ մըխիթարանք:

Յեվ յես այն յերգին իմ վիշտն եմ տալիս,
Նա ել ե ինձ պես թախիծով պատած,
Նըրա ծայնի մեջ իմ սիրտն ե լալիս
Յեվ ինքըս սիրում՝ վըշտերըս ատված...

[1860 թ.

Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎԶՅԱՆ

ԳԱՐՈՒՆ

Պանաչ ե նորից,
Ծիծառը յերգում,
Վազը հրրճվանքից
Լալիս ե այգում:

Հովիտ ու լեռինք
Ծաղկել են պես-պես.
Իսկ դո՛ւ, հայրենիք,
Յե՞րբ պիտի ծաղկես...

28 հունվարի 1861 թ.
Պետերբուրգ

Թաբգմ. ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
(1907)

* * *

Այն որից ինչ վոր ո՛ւ, իմ հայրենիք, սերըդ եմ զգացել,
Կորել ե քունըս, ե՛լ չունեմ հանգիստ, ե՛լ չունեմ դադար,
Զարկերակիդ յես ականջը սըրած լըսող եմ դարձել,
Այսպես ե մըթնում, այսպես լուսանում՝ անվերջ, միալար:

Մըտքեր են գալիս, ի մի հավաքվում, իրար են դիզվում,
Զգացմունքներն ա՛հա շարժվում են հըպարտ, սըրտիս մեջ համառ,
Յեվ չեմ բողոքում, ուրախ եմ, կյանքըս այսպես ե անցնում՝
Միշտ մըտածելով քո՛ մասին ահա, քո՛ սիրո համար:

Սակայն, հայրենի՛ք, նըրա համար եմ միայն յես տանջվում,
Միմիայն այն ե տըխուր, վողբալի, դըժգոհ եմ նրանից,
Վոր հողիդ վըրա, այսքան մարդկանց մեջ — յես մարդ չեմ
զըտնում՝
Միտքըս հաղորդեմ և զգացմունքներիս դարձնեմ մասնակից...

6 օգոստոսի 1861 թ.
Ղվարելի

Թաբգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎԶՅԱՆ

* * *

Դու, հրաշալի իմ զորիչ, ի՞նչ ենք անում մենք ծափեր,
Ծառայում ենք ինչին մենք—կըրկին սիրով ծառայենք,
Ժողովրդի մեջ սրփռենք մեր խոսքերը անվեհեր
Յեւ չարութեան խափանման ուրախութեամբ միշտ նայենք:

Թե վոր մարդիկ չիմացան, մեր սիրտն ե պարզ աստըծուն,
Մեր իղծերը միշտ սուրբ են, միշտ ցանկութեամբ մաքուր ենք,
Մանկութեանից ծրգտել ենք ուրախ կյանքին վըրացու,
Թո՛ղ նախատեն, սակայն մենք այն փընտռելով պիտ մեռնենք:

Միշտ ասում են իմ մասին—վրացու վատն ե նա ասում,
Մեր արատը չի ծածկում, ատելութիւն սրանից շա՛տ,—
Տըխմարներն են բամբասում, իսկ լավ սիրտն ե գիտակցում
Ատելութեան մեջ ծածուկ վորքան սեր կա անարատ:

Հոկտեմբեր 1861 թ.

Ղվարելի

Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎԶԵԱՆ

1871 թիվ 23-Ը ՄԱՅԻՍԻ

(Կոմունայի ամսական օրը)

Ճընշվածներին ազատագրող
Մեծ դըրոշը տապալեցին...
Նորից յերկրի ձեռը ճընշող
Այն դըրոշը զարկեց գետին:

Նորից զոհվեց մարդկանց համար
Ժողովուրդը զարմանալի,
Նորից հագավ մեծ փորձութեան
Նա պըսակը հիանալի:

Նորից թափվեց յերկրի համար
Սուրբ արյունը զոհվածների,
Նորից պարտվեց գործը անմար՝
Ազատ սիրո, վեհ մըտքերի:

Նորից գետին տապալեցին
Մեծ խորհուրդըն այն փըրկարար՝
Վորի համար ինքըն աստված
Խաչվել, տանջվել ե չարաչար:

Նորից խախտվեց պատմութիւնը,
Կանգնեց վազքը նորոգ կյանքի—
Յեւ Նորից են նըստել հաղթող
Տըզրուկներն խըրախճանքի:

29 մայիսի 1871 թ.

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱԽՏԱՎՈՐ ԱԶԳ

Արդյո՞ք մեզ պես ազգ բախտավոր
Կա՞ աշխարհում այս անցավոր.

Կոռ*-դալանով*,

Մեծ փալանով,

Վողջ զարդարված հույժ փառավոր.

Անմեղ-անշառ,

Յեվ անաչառ,

Գոհ և հրլու դեպ մեծավոր.

Միշտ անվրդով,

Սողուն՝ փորով,

Հույժ պատվական, որինավոր.

Համբերատար

«Ջորի»-աբար,

Փորձված ուժովրն մարմնավոր:

Արդյո՞ք մեզ պես ազգ բախտավոր

Կա՞ աշխարհում այս անցավոր.

Միշտ անմրուռնչ,

Կարծեք թե մունչ,

Հենց վողորմած լավ դատավոր.

Աչքերը փակ,

Յեվ զըլխակապ,

Սանձը բերնին հրրեշավոր.

Ականջը խուլ,

Լեզուն ել կուլ,

Լուրջ, խելամիտ և բանավոր.

Անկար-հրզոր,

Բոլորը ստոր,

Ծույլ անսահման, արատավոր:

Արդյո՞ք մեզ պես ազգ բախտավոր
Կա՞ աշխարհում այս անցավոր.

Վողջ փողոտված,

Գլուխը ծրուած,

Անգործ, համառ, վոչ բեղմնավոր.

Չափ չիմացող,

Ճամբից շեղվող,

Անդիմացկուն և նենգավոր.

Վատին լըսող,

Լավին ծեփող,

Դրրսում գյաղա, ներսում զինվոր.

Բան չունեցող,

Բան չիմացող,

Անհոգ, քաղցած և չունեվոր:

Արդյո՞ք մեզ պես ազգ բախտավոր

Կա՞ աշխարհում այս անցավոր:

29 ոգոստոսի 1871 թ.

Թարգմ. Լ. ՄԵԼԻՔՍԵՅ-ԲԵԿ

* * *

Իմ լավ յերկիր, հայրենիք, ինչո՞ւ աշդպես տըխո՞ւր ես...
 Լույս ապագան հո մերն ե, թեյեվ ներկան խորթ ե մեզ.
 Թե հրներըն հեռացան, բայց նորերին քեզ հետ տե՛ս.
 Անցած փառքիդ մեծություն աշդ նորերը կըտան քեզ.
 Իմ աչքի լույս, իմ յերկիր, ինչո՞ւ աշդպես արխո՞ւր ես:

Արդ վորդիբըդ մեծացան, սըրտով արի՛, հոգով վե՛ս,
 Նըրանց հոգսի առարկան դո՛ւ յես, և դու կըլինես,
 Յեվ չեն խաբի նըրանք քեզ, յեթե հավատ ընծայես.
 Նըրանց շնորհիվ կըխընդաս ու կըժպտաս լուսերես,
 Իմ աչքի լույս, իմ յերկիր, ինչո՞ւ աշդպես տըխո՞ւր ես:

Նըրանց սիրտը քեզ համար անկեղծ սիրո բընքույշ բուն,
 Նըրանց միտքը քեզ համար մի հենարան հաստատուն...
 Նենգությունը թըշնամու չի ներս խուժի նըրանց տուն:
 Կըջախջախեն կըրծքերով այն թըշնամուն աներես,
 Իմ լավ յերկիր, հայրենիք, հապա ինչո՞ւ տըխո՞ւր ես:

15 սեպտեմբերի 1872 թ.

Թարգմ. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱԶԱԼԵԹԻ ԼԻՃԸ

Քաղալեթի լընի խորքում
 Կա, ասում են, մի որորոց.
 Շուրջը նըրա այգի ծաղկուն
 Փըթըթում ե մի ծաղկանոց:

Ասում են, աշդ հավերժ կանաչ
 Ծաղկանոցը չի թառամում.
 Ժամանակի թափի առաջ
 Նա իր գլուխը չի խոնարհում:

Շոգն ու ծմեռն կանաչուտին
 Բընավ յերբեք չեն վընասում.
 Ու արեվ կա նըրա խորքում,
 Գարուն ե միշտ, հար գովասուն:

Կանաչավետ այգու կըրծքում
 Որորոցը հանգիստ դեռ կա,
 Վոչ վոք, վոչ վոք դեռ չի խորհում
 Իջնել խորքը նըրա անտակ:

Սիրինոզներ* միայն լըռիկ
 Որորոցի շուրջը խըմբված
 Յերգում են հար բուրբ տարին,
 Յերգ ու պարի իրենց տըված:

Թամար մեփեն* ե իբր թե
 Որորոցը դըրել այնտեղ,

Ազգըն այնքան արցունք թափեց,
Վոր գոյացավ մի լին անեղ:

Բայց չեն ասում, թե որոցքում
Ով ե պառկած կամ ով ե նա.
Ազգըն ի՞նչ եր արցունք թափում,
Վոր շուրջը մեծ լին գոյանա:

Գուցե պառկած ե մի մանուկ,
Վորի անունը չեն տալիս,
Վորի համար անըրջում ե
Վրացին այնքան ջերմ, անձկալի:

Թե այդպես ե, յերանի այն
Արիական քաջ հերոսին,
Վոր ծեռքըն իր ազատարար
Կըմեկնի այն որորոցին:

Թե այդպես ե, յերանի այն
Գորովագութ մորն անվանի,
Վոր կըրծըրն չըքնաղ մանկանն
Կըսընի ու վեր կըհանի:

14 հուլիսի 1883 թ.

Թարգմ. ՎԱՐԴ. ՍԻՄՈՆՅԱՆ

Պ Ո Ե Մ Ն Ե Ր

ՈՒՐՎԱԿԱՆ

(Նվիրում եմ Իյ. Պոյսարացկուն յնվ Իլիա Ծիմամանովադիւն)

«Թե ծաղիկը վարդի շնորհիվ թառամի և չորանայ,
Նըրա տեղը ծաղկանոցում ուրիշը կըտիրանայ»:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ

Թարգմ. Լ. Մ.-Բ.

I

Ահա՛ հրաշափառ արեւը ծագեց
Յեւ լուսազարդեց յերկիրը խավար,
Կովկաս լեռների գագաթները մեծ՝
Ոծվեցին վոսկե լույսերով անմար:
Լեռներից վերեւ Մղինվարն ե ահա՛,—
Յերկրի ու յերկնի միջեւ բարձրանում,
Վորպես մեծաշուք սառցապատ հրակա՝
Կանգնած ե նա լուռ, ու միտք ե անում:
Կարծես բընության ուժերով անմեռ
Յերկինք հեղքելու վեր ե խոչացել
Յեւ կարծես նըրա արշափն անվեհեր՝
Բընության ուժով յերկնի մոտ կանգնել:
Նըրա գագաթը սառույցով պատած
Զուգվեց արեւի վոսկե շողերով,
Վախկոտ աշխարհին սառցակույտը ցած՝
Նայում ե ահեղ սպառնալիքներով:
Կարծես սպասում ե նա վերջին ժամին,
Վորպեսզի թընդա, գոռա, սասանվի,
Ցամաքի վըրա իջնելով ուժգին,—
Նրան ել կործանի, ինքն ել կործանվի:

II

Սակայն և այնպես հանգիստ եր այն որ
Այգը այն պայծառ գեղեցիկ ու լուռ,
Վոր Մղինվարն անգամ անեղ ու հրզոր
Վաղորդյան փառքին յեղավ անծնատուր:
Լո՛ւռ եր և յերկիր, լո՛ւռ ու անվրդդով,
Կարծես լրուությամբ լրսում յերկրներն,
Իսկ յերկիրն անամպ, լիառատ սրբտով՝
Աշխարհ եր լրցնում բարիքով անգին:
Միայն անհավատ իմ միտքն ու հոգին
Այգու հրմայքին անհաղորդ մնացին,
«Դու մի հավատա լռությունն այս սին,
«Յերկիրն ե սրտում, յերկիրն ել,—ասին,—
«Նրման այգիներ հաճախ են բացվել
«Տարաբախտ յերկրի աչքերի առաջ,
«Բայց տանջված սիրտը յերբեք չի զգացել
«Յերկրի բարիքը, պարգեվ բարգավան:
«Սուտ ե հիմնովին ինչ վոր քզգացիր,
«Յերկիրն ե անա՛ գալարվում անբուն,
«Այս լրության մեջ դու լավ խորացիր,
«Կրտսնես վորքան անեծք կա անհուն...»:

III

Բայց վերջը այգու քաղցրությունն անուշ
Ցրրեց կասկածիս ամպերը մըթին,
Ամենագորը եյակիս անուժ,—
Ինձ հույս ներշնչեց և կյանքը վերստին:
Հետո հույսերով յելած իմ հոգին
Լքվեց մի անդորր, ուրախ խրնդությամբ,
Առաջ կասկածից մաշվող իմ սրբտին
Անապակ սերը տիրեց վեհությամբ:
Յերեվաց անա՛ ինձ ամենագոր
Հավատը բարո աշխարհի համար,
Տրվեց վերսրլաց մըտքերը հրզոր,
Սրբեց ականջըս, աչքերըս պայծառ:
Ոտար տեսիլներ ինձ այցի յեկան
Լի յերանությամբ, ուրախ խրնդությամբ,

Վորոնք տիրում են մարդուն դուրեկան
Մի խորհրդավոր գայթակրողությամբ:

IV

Յեվ անա՛ տեսա Մղինվարի գըլխին
Մի մեծ ծերունի ալեգարդ՝ կանգնած,
Աշխարհի նրման անխոս ու լռին
Նա ել եր անշարժ մըտքի ծով ընկած:
Ձեռքով աչքերին նա շվաք եր արել
Յեվ ուշադրությամբ նայում եր հեռուն,
Նըրան լեռները աչք եյին հառել,
Իսկ ստորոտներում խենթ թերզն եր յեռում:
Թերզը այն անեղ, ուժեղ, զորավոր,
Փռուփռած հոսում, ափերն եր փորում,
Վորպես կատաղած առյուծ վիրավոր՝
Աղաղակում եր, աղմըկում, գոռում:
Թընդում եր նույնպես շուրջը սար ու ծոր,
Ներքեվում հուզված զավակին նայում:
Նըրանց գոռոցի արծագանքը խոր՝
Ձորում ճամբորդի սարսափի բերում:
Մի կողմ դաշտերն ե, մի կողմն ել անտառ,
Իսկ նրանց միջովը Արագվը կայտառ...

V

Մեր սիրուն Արագվ, վո՛նց եմ քեզ սիրում,
Վրաց կյանքին վըկա դու ես միշտ լինում...
Այդ քո ափերին իմ հայրենիքը
Փռված եր մի որ փարթամ ու լիքը:
Իմ յերկրի փառքը, պատիվը ե՛ն հին
Քո սուրբ աչքերի առաջն ե ծաղկել,
Սիրում եմ ես քեզ, վոր միշտ վըրացին՝
Ափերիդ վըրա—այստեղ ե ծընվել:
Ափքներիդ մեջ իմ լավ աշխարհի
Մեծ պատմությունն ե դարերով թաղված,
Յեվ սուրբ արյունը վըրացիների՝
Ափերիդ վըրա ամեն տեղ թափված:
Այնտեղ, ուր հրզոր ջուրըդ ես խառնում,—
Դու պըղտոր Քըռին կապվում, միանում,

Վրաց կյանքըն այնտեղ յեռում եր մի որ,
 Հայրենյաց համար ծայն հրնչում հրզոր:
 Ալիքներիդ հետ դարեր զընացին,
 Դարերն հետ ել զընաց և վրացին...
 Քանի անգամ եմ ձեռքերըս ծալած,
 Հետեվել ջրիդ աչքերըս հառած...
 Ի՞նչ եյի փընտռում,—անցյալը վերստին,
 Քո առաջ կորած հայրենիքըս հին...
 Սակայն արյունն եր հոգնած աչքերիս
 Միայն ըսպանիչ պատասխան տալիս:

VI

Սակայն հատկապես վո՛չ Արագվը մեր,
 Վո՛չ Թերզը հրզոր, վո՛չ անտառ ու լեռ
 Զըկարողացան ծերունուն գրավել,
 Նայում եր վերից հըպարտ, անարգել:
 Վողջ Վըրաստանը փըռված եր հեռվում...
 Յեվ այն ծերունին նըրան եր նայում.
 Վորը մարգարիտը մեր այս աշխարհի
 Դիտում եր սիրով ծերունին արի:
 Վորտեղի՞ց յեկար, ո՞վ բերեց այստեղ,
 Ո՞ր, զարմանալի, ասա, մարդ, դու ինձ,
 Ինչո՞ւ յես թողել դու քո տուն ու տեղ
 Յեվ ի՞նչ ես նայում լեռան կատարից:
 Ու յերբ ասացի, իսկույն լըսեցի՝
 Ծերունու ծայնը վեհ ու առնացի.

VII

«Միշտ և ամեն տեղ, Վըրաստան, զիտցիր քեզ հետ եմ անցել...
 Քո ուղեկիցն եմ, միշտ քեզ հետեվող, քո անմահ հոգին,
 Քո զավակների արյունով ահա՛ սիրտըս լրվացվել,—
 Սըրտիս մեջ պահում անցյալը քո հին, ներկա անմեկին:
 Յես ել եմ տանջվել, հե՛յ դու տարաբախտ քո տանջանքներով,
 Քո՝ արցունքներով յես ել եմ խորունկ արտասովել, լացել,
 Հափըշտակվել եմ անցյալիդ փառքով և փափագներով,
 Քո այս ներկայով սիրտըս ու հոգիս վերբեր ե ստացել:
 Անցած որերիդ վեհ ու մեծաշուք փառքդ եմ հիշում,
 Գիտեմ, վոր մի որ դու ել ես յեղել ուժեղ ու հրզոր,

Աշխարհի փառքը—ազատությունը քեզ ել եր տիրում
 Յեվ այս բոլորը վորպես մի փոշի սըրբվել ե այսոր...
 Իսկ այսոր վորդիդ չի՛ ել հավատում հարության որիդ,
 Վախճանի միտքն ե նըրան համակել, սըրտում վերք բացել,
 Տանջանքների մեջ կորել ե հավատ, և՛ ծիծաղ, և՛ խինդ,
 Վորպես կողոպտված, ամայի տաճար՝ քեզ անտեր թողել:
 Մինչեվ զավակդ չի հարթի ճամբան իր կյանքի համար,
 Մինչ զիտակցության լուսավոր մըտքով նա չի բարձրանա,
 Կյանքի հոսանքին թե չի թափանցի մըտքերով պայծառ՝
 Կըլինի անհույս և անմըխիթար, չի հանգըստանա.
 Իզուր կըտանջվի, տըխուր, սըրտաբեկ արցունք կըթափի,
 Բայց չի հավատա հարության որիդ, ո՛ր, բազմաչարչար,
 Յեվ այն արցունքը անհավատության, կասկածանքների՝
 Կըբարբառեն միշտ զավակիդ հոգու վիճակը անճար:

VIII

«Այստեղ վոչ վորի—մեծի թե փոքրի
 Սիրտը չի ցավում յերկրի ցավերով,
 Մոռացել են, վոր պարգեվ ե յերկնի՝
 Հայրենիքը վեհ, պիտ նայենք սիրով:
 Մոռացել են, վոր մեծ ե համարվում
 Աստըծո առաջ և նըվիրական,—
 Ով վոր աշխարհի հըրով ե այրվում՝
 Իրեն նըվիրում ու զոհվում նըրան:
 Նա սուրբ ե, մաքուր, ով արժանացավ
 Հայրենյաց համար պայքարել անվերջ,
 Յերնեկ են մարդուն, հերոսին են լավ՝
 Նա ել չի մեռնի խալիս սըրտի մեջ:
 Դարերից հետո նորից կըհիշվի,
 Նըրան կյանք կըտա ամբոխի յերզը,
 Յեվ վոգեվորված պատանիների
 Սըրի դաստակին կըդողա ձեռքը...
 Ու յերբ ծերունին այն յերզը լըսի՝
 Կըրկին նըրա մեջ ուժը կարթնանա,
 Յեվ մահով տարված այն մեծ հերոսի,—
 Նոր կյանքով ապրել նա կըցանկանա
 Մայրը իր վորդուն որորոցի մեջ
 Կերզի այն յերզը քաղցրանուշ ծայնով

Ու թե ցանկանա լուսավոր մի եջ՝
Կըցանկա մեռնի—հերոսի մահով:
Կույսըն ել կերգի ավերի հաճախ,
Կըհիշի նըրան—հերոսին սիրով,
Ամենքը կերգեն և ուրիշ մատաղ
Հերոս կըծընվի այն վեհ յերգերով:

IX

«Սակայն, վըրացի՛ր, հերոսը ո՞ւր ե,
Վորին փընտռելով սիրտըս տըխուր ե,
Ել չունենք նըրան... Նրա տեղըն ահա՛,
Մընացել թափուր, տատասկով լըցվել,
Հերոսին ծընող այն մեծ առարկան՝
Ձեր մեջ ջընջվել ե ու վոյընչացել:
Դուր դադարել եք վրացի լինելուց,
Մեծ հայրենիքը կործանել վաղուց.
Ո՞վ պետք ե ծընի ձեր մեջ վեհ զգացում,
Ինչո՞վ բորբոքվի ել սիրտը վրացու:
Բընությունն ահա՛, ձեր շուրջը տեսե՛ք
Լըցրել ե չորս դին հազար բարիքով,
Վոր աճ տա ձեր մեջ մեծ կյանքին լուսե,
Վոր դարձնի ուժեղ, յերջանիկ ու գոհ:
Բա այս յերկիրը՞, ցամաքի աչքը՞,
Ցեմ մեծ դըրախտի անկյունը փոքրի՞կ,—
Վորը վըշտացել, ծըռել ե մեջքը,
Վոր դուր կորցրել եք նրա սերը նույնիսկ:
Վոր դուր թողել եք անհույս, անհարակ,
Ձեր իսկ չարության վերքերով պատած,
Ձեզանից մերժված, ոտար լըծի տակ՝
Պատասպարվել ե վորբի պես ատված:

X

«Ընկածների մեջ այստեղ ել, սակայն,
Աստըծո կայծն ե մերթ փայլատակում,
Վոմանց սիրտը դեռ աշխարհավերման
Դիմադրում ե ու չի հըպատակվում:
Սակայն նախանձն ու թըշնամությունը
Նըրանց մեջ ել ե խոր արմատացել,

Այս ցավից նըրանց արիությունը
Առաջ գալու պես՝ իսկույն վատացել:
Ահա՛ մի քանի մարդիկ միասին
Աշխարհ փըրկելու մի յելք են գըտել,
Մի գործի համար արթնացել կարգին,
Բայց և չեն ուզում իրար վըստահել:
Իրար բարիքն են նըրանք նախանձում,
Թեպետ ծըգտում են մի համբա անցնել,
Տապալում են այն՝ ինչ վոր ցանկանում,
Ինչ աշխատում են վերակառուցել:

XI

«Ահա՛ և տերը և նըրա գերին,
Դողացող ձեռքով տուրք ե նա կըշռում,
Ու յերբ չափերը հավասարվեցին՝
Տերն առաջ յեկավ, վոտ կոխեց նըժրում:
Այսպես նա տուրքը կըրկնակի դարձնում...
Վըշտալի սըրտով ժըպտում ե գերին,
Իր ձեռքով տուրքը կըրկին մեծացնում՝
Արցունք յերեմում նըրա աչքերին:
Բայց տիրոջ սիրտը քար ե անըզգա,
Խիղճը չի կարող նըրան փափկացնել,
Ձի կարող բուժել գերու վերքը նա՝
Ով վոր գերության ինքն ե յենթարկվել:
Ցեմ թըշվառ գերին, տարաբախտ գերին
Գութ ե աղերսում, տըխուր, տըրտմադեմ,
Մըտածում ե նա արցունքն աչքերին.
— Ցեա զավակներիս ինչո՞վ կերակրեմ:
Ափսո՛ս, քըրտինքըս այն առատ թափված,
Ափսո՛ս, պըտուղը քըրտինքով աճած,
Դիշեր ու ցերեկ անդուլ աշխատանք,
Արեմ, անձրեմին մընալ յերկնի տակ,
Հագիվ ձեռք բերած վաստակըս արդար,
Փործ, անընթացյուն, գործ համբերատար,
Միայն տիրոջիս աչքն ե լիացնում,
Իսկ ձեզ, ընտանիք, վոչինչ չեմ հասցնում:
Վա՛յ, ինձ, դժբախտիս, ել ի՞նչ ե մընում,
Ել ընտանիքիս ի՞նչ գոհացում տամ...

Ով ե աշխատում և ով կըշտանում,
Աստված իմ, ո՞ւր ե այստեղ դատաստան...

XII

«Մարդկային զգացմունք բո մեջ չեն տեսնում,
Մոր ծրծից մանկան պոկում են, տանում,
Ո՞ւր կըվաճառեն, ո՞վ ե իմանում...
Պիղծ ձեռքով նրբանք փորում են, հանում
Մոր սրբտից ամեն ըզգացմունք անգին
Յեվ մեղք համարում սեր դեպի վորդին:
Թե պարգեվել ե տերը քեզ աղջիկ,—
Ջրբնաղ արարած, սիրուն, գեղանի,
Մի՛ կարծիր, գերի, դո՛ւ ճընշված ռամիկ,
Թե նա կըլինի սրբտիդ սպեղանի:
Կըխըլեն աղջկադ և, տե՛ս, կըծախեն
Նըրա նամուսը առանց խըղճալու,
Նըրա սրբտի մեջ թույն կըսրըսկեն,
Կըդարձեն նըրան՝ վոտքի տակ տալու:
Անբիծ աղջըկադ անարատ դեմքին
Կըտեսնես կընիք անառակության...
Քո սիրած գործը տապալած գետին
Յեվ նա անարգված վայրագ բըռնությամբ...
Յերես կըդարձես դու զարհուրանքից,
Կուգես արտասովել, արցունք չես ճարի,
Նըզովք-անեծքով կըխորչես նրանից,
Աղջիկըդ զըզվանք քեզ կըպատճառի,—
Յեվ այնժամ կասես՝ յերնեկ ինձ համար
Վորպես ոծի ճուտ դու աշխարհ գայիր,
Վոր այս աշխարհում բաշ գալու թըշվառ,
Դո՛ւստըր գեղանի, դու չըդառնայիր:

XIII

«Դո՛ւ աշխատանքի զավակ ու գերի,
Մեղսոտ աշխարհի լուծն ե քեզ ընկել,
Թեպետ փըրկիչը—բեռնավորների
Քեզ ազատելու՝ խաչ ե բարձրացել:
Թեպետ աշխարհը նրա գործըն այսոր
Միայն խոսքով ե պաշտում, դավանում,

Բայց պատվիրանը ասում ե հըզոր՝
Վոր վեհ ապագան քեզ ե պատկանում:
Աշխատանքն այսոր գերի յե յերկրում,
Կողոպտիչներից հալածված, ընկած,
Բայց շըղթաները խըզվում են, քանդվում
Յեվ պետք ե ընկնեն շուտով ջախջախված:
Վոր աշխատանքը ազատվի իսպառ՝
Բեռ ե մեր յերկրի հերոսի համար,
Մարդը—հուզմունքի ալիքը անսպառ,—
Ազատ շընչելու մըղում ե պայքար:
Ել չի դիմանա աշխարհը այս հին,—
Վերանորոգման փոթորկին անեղ,
Յեվ ճըշմարտության սկըսված պայքարին
Ել չի դիմանա կողոպտիչը՝ գելս:
Ու ջարդված կընկնեն շըղթաները ցած,—
Արգելակները մարդկային կյանքի,
Յեվ նոր սերմանած, նոր ծընունդ առած՝
Աշխարհում կյանքը նորից կըծաղկի:

XIV

«Յեվ աշխատանքը կըտիրի այնժամ
Վեհ ճըշմարտության զորությամբ անխռով,
Ու կըհաստատվի աշխարհում փարթամ
Մարդասիրության մեծ կերպարանքով:
Յեվ այդ թո՛ղ լինի ամենքի համար,—
Համահավասար տաղանդ պարգեվող,
Թո՛ղ վոր նա ջընջի հալածանք, ավա՛ր,
Մի տեղ արածեն գայլն ու գառը թո՛ղ:
Այնժամ չի լինի լոկ խոսքեր անբան,—
Ազատ միություն և յեղբայրություն,
Փըշյա պըսակով չեն կըտրի ճամբան՝
Մարդասիրություն ու վեհ գըթություն:
Դըլխի յե ընկել հին աշխարհն հիա,
Վոր նա կորցնում ե կարգը որեցոր,
Վոր այս մեր դարը պետք ե զորանա,—
Իշխող աշխատանք պիտ ծընի հըզոր:
Այնժամ, ո՛վ թըշվառ, կըդառնաս արի՛,
Խըլված տաղանդըդ կըվերադառնա,

Ուրիշի համար դու հոր չես փորի՛,
 Գերի չես լինի, չես ել ունենա:
 Այնժամ յերգերիդ ձայնը քո տըխուր,
 Մեղմ ու մըմընջող, թախծոտ, վիրավոր,
 Վոնց նախրապանի տընքոց ու մըմուր,
 Ձայնը հովըվի լըսվող հեռավոր,—
 Կըփոխվի ուրախ յերգ ու խընդուծյան,
 Գուծանիդ կանգնած դու քո ջերմ սիրով,
 Կըվորդեգրըվես մեծ ազատության, —
 Աղոթից քաղցըր անուշ յերգելով...
 Դաշտեր, անտառներ, ակոսներ շարված
 Քո իսկ տաղերով կըզրվարճանան,
 Բոլորը քեզնով զուգված, զարդարված՝
 Քո քաղցըր յերգին արծազանք կըտան:

XV

«Մեծատունն ահա ապրում վեհափառ,
 Բավականության ցոփ կյանք ե վարում,
 Այնժամ յերբ նորա յեղբայրը թըշվառ՝
 Ստորկության մեջ ե հուսահատ մարվում:
 Յեվ յեղբայրակից մարդու փըրկություն
 Բաժին ե միայն հերոսի համար,
 Մեծատունների ինքնասիրությունն
 Ձի վերցնի իր վրա այդ բանը իսպառ:
 Նա չի ցանկանա բախտը աշխարհի,
 Նորա հեծությամբ ինքն ե լիանում,
 Ձարության յերբեք նա չի դիմադրի,
 Նորա շնորհիվ ե ապրում, հիանում:
 Վաճառականն ել քրսու ժըպիտով
 Իրը ծախելիս յեղբորն ե խաբում,
 Կյանքի կամուրջը կանցնի անվըրդով,
 Թեկուզ և տեսնի նրան սովն ե լափում:
 Ահա՛ տերտերն ել,—հայր ժողովրդի,
 Վորին Քրիստոսից մեծ պարտք ե դըրվել,
 Վոր ժողովրդի հոգին նա կըրթի,
 Բայց տեսե՛ք վոնց ե ձեռքերը ծալել:
 Ու՛ր ե նրա խոսքը այն մեծ ուսուցման,
 Սիրո, բարիքի և արդարության,

Նորա շըրթունքից ինչո՞ւ չի հոսում
 Յեվ ազգը ընկած նա չի բարձրացնում:
 Ու՛ր ե, ասացե՛ք, ճշմարտությունը
 Աշխարհի համար անվերջ բարբառող,
 Ո՛ւր ե խաչյալի այն պատվիրանը՝
 Անառակ բանը աշխարհից վանող...

XVI

Ահա՛ Թբիլիսին... Ծերին թե մանկան,
 Տըգեղ, գեղեցիկ, տըղա-աղջըկան,
 Մեծին թե փոքրին, իշխան, գյուղացուն
 Յես լսում եյի ականջս սըրած:
 Սակայն յերդում եմ անունը վրացու՝
 Միտք չեյի գըտնում մըտքերում նըրանց:
 Վողջ կյանքը այնտեղ քեզ մի հայացքով,
 Իսկական մի կյանք կըթըվա տեսքով,
 Ուր և՛ խընդում են, և՛ ուրախանում,
 Յե՛վ խոհում, ըզգում, և՛ գործ են անում:
 Տեսնում ես ահա՛, յեռ ու զեռ մի խիտ,
 Դըժբախտ լացի հետ և՛ ուրախ ժըպիտ,
 Բայց նըրանց լացը, ժըպիտն ու զգացմունք,
 Խընդություն թե՛ խոհ, գործեր թե՛ աղմուկ—
 Իսկի միտք չունի մի յեղունգի չափ,
 Ամեն բանն այնտեղ կեղծ ե, աչքակապ:
 Փուչ ե այն կյանքը և ունայն մի բան,
 Դըժգույն ե սաստիկ, դատարկ ու խաբող,
 Այնտեղ կյանք չըկա, ճաշակ աննըման
 Յեվ վոչ առարկա քեզ հափըշտակող:
 Յերեկվա նըման անցնում են որեր,—
 Այնտեղ այսոր ել անգույն ու տըրտում,
 Յեվ ինչին յերեկ ծըգտել են հայրեր՝
 Այսոր վորդիքը չեն գընահատում:
 Ձգացմունք են ծախում նրանք վոսկե գընով,
 Տիրոջ ժըպիտին՝ պատվասիրություն,
 Յանգոտ շըղթայի վրա փոխելով
 Իրենց հայրերի վեհ ազատություն:

XVII

«Ահա՛ և Մցխեթան՝ տեղ հերոսների,
 Մեր հրակա կյանքի հրակա դամբարան,
 Ուր նախնի վրացոց զավակներն արի՛
 Խորը զըցեցին հիմքն ազատության.
 Վորտեղ ծաղկում եր այն ծառը կենաց*,
 Վորը ծիլ առավ վըրացու սըրտից,
 Յեվ աղբյուրը այն, աղբյուր վողորմած՝
 Բըղխում կենարար սըրտի խորքերից.
 Ուր և յեղեմիլու ծառը հոտավետ
 Ծաղկում եր, բուժում վերքերը վրացու,
 Յեվ ուր ծառի տակ աղբյուրը հավետ՝
 Մեզ անմահական իր ցողով ոժում.
 Վորտեղ պըտուղը, տերեմիլն այն ծառի
 Դեղ եր մահացու վիրավորների,
 Վերքը լվանալով ջըրով աղբյուրի՝
 Ցամիլ եր դադարում վըրացիների:
 Արդ ել չի բըղխում աղբյուրը կենաց,
 Կյանքի ծառն ել ե արդեն չորացել,
 Մայրաքաղաքը այն լայնատարած՝
 Դինեառների ավան ե դարձել:
 Ապարանքները դարձել են ավեր,
 Նըրա մեծ կյանքը վողջ ամայացել,
 Այսոր այն կյանքի սըրբազան վայրեր՝
 Անբան զազանի վոտի տակ անցել:

XVIII

Մըշտավայր վրացո՛ւ, աշխարհի համար վորպես աչք ծընված,
 Վորբան արհավիրք և տանջանքներ են անցել քո զըլխով...
 Խաչալի համար դու նորից խաչված ու նահատակված,
 Բացի բեզանից ել ո՞վ ե անցել այս փըշոտ ճամբով:
 Ո՞վ կա ել ուրիշ, վոր հազար տարով պայքար ե մըղել,
 Յեվ վորպես փոշի յերկրի յերեսից չի ջընջվել իսպառ,
 Վո՛չ, ուրիշ վոչ մի որինակ չըկա, այդ դու յես յեղել,
 Չըկա մի յերկիր, ազգություն մի այլ՝ այդ կարողանար:
 Չավակներդ քո իրենց զոհ բերին թըշնամիներիդ,
 Յեվ յերկու հազար տարվա ընթացքում արյուն թափեցին,

Սակայն և իրանց գլուխները հրպարտ, ձեվերով անմիտ
 Վոչ վորքի առաջ հավետ և ընդմիշտ չըխոնարհեցին:
 Ու կար յերկու բան և վորի համար գործում եր վորդիդ,
 Չար բախտը նըրան այլ բանի համար ժամկետ չըտըվեց,
 Յեվ հայրենիքի, հավատի համար կըռվում եր նա պինդ,
 Յերկուսն ել պահեց, թեպետ ամեն բան նըրանց զոհ բերեց...

XIX

Աչքիս առաջն են ահա՛ որերը, տանջանքով լեցուն,
 Յերք վոր բեզ տիրեց Մակեդոնացու* գորքը ներխուժող,
 Յերք նա սասանեց քո պարիսպները—կյանքի ամբողջուն,
 Ատող, նախատող, ոտար իշխանը՝ բեզ միշտ հալածող:
 Ատում եր յերկիր, վորին տիրացել, բըռնել եր ձեռքին,
 Ատում եր նույնպես ազգի տաղանդը, բարիք ու խընդում...
 Ո՛ր, վո՛չ, չի կարող սպեղանի դընել ազգության վերքին,
 Ով վոր ազգության սեր ու հարգանքը չունի իր սըրտում:
 Նա ազգը ճընշող, աշխարհը բանդող, տիրակալը այն՝
 Վըրաստանը վողջ կեղտոտ լաթի պես վոտի տակ տըվեց,
 Ազգության հույսը, հավատն ու սերը, ծայր մարդկային,
 Յեվ ազգի լեզուն՝ զանձը ազգային՝ հալածել սկսեց:
 Ատում եր ամեն, ինչի մեջ ազգի արժանիք տեսնում,
 Ինչի մեջ ազգը շնորհք եր ցույց տալիս, տաղանդ պատկերում,
 Ինչի մեջ նըրա փառքն եր յերեվում, պատիվը ցուում,
 Յեվ ինչի համար ապ ու պապերը զոհվեցին կըռվում:
 Ու հնազանդվում եր քո ազգը նըրան մեծ ատելությամբ,
 Հալածանքների, տանջանքի առաջ իր վիզը ծըռում,
 Յեվ այն երրտացնող աջառուններից զաղսնի զգուշությամբ՝
 Գիշեր ու ցերեկ իղձերը գրոհի՝ փակ սըրտում սընում...

XX

«Յեվ վրիժառության այն որն ել հասավ,
 Յերք վրացին կանգնեց թըշնամու դիմաց,
 Գրոհի այն սուրը արդար ե իրավ,
 Յերք վոր հայրենի սիրով ե բըռնված:
 Հիշում եմ յես այն քաջ Փառնավազին*,
 Յերկրի սըրտացավ վորդուն անվանի,
 Նա այն մեծ գործը վերցրեց իր վըզին՝
 Վոր մեր թըշնամուց վըրեժը հանի...

Պատանի հերոսն ել չրդիմացավ,
Ազգի ու յերկրի վերավորանքին,
Ել չրդիմացավ չարութեան անբավ,
Մեծ հայրենիքի այն հրպարտ վորդին:
Յեւով, թըշնամուն նա հասցրեց հարված,
Ճորտ ու գերութունն իսկույն տապալեց,
Ոտարի ձեռքին իր ազգը նընշված՝
Վեհ ազատութեան շողերով ոծեց:
Յեւ բեզ, Վրաստան, թըշնամուց հաղթված,
Նորից բարձրացրեց յերջանիկ կյանքով,
Վրացու անունը ընկած, անարգված՝
Նորից զարդարեց պատվով ու փառքով...

XXI

«Վրաստան ահա՛, այնուհետ վորդիդ
Պատյան չի դրբել իր սուրը անահ...
Քեզ ե սեվեռել այն հին աշխարհի
Աչքն ու հայացքը անկուշտ ու ազահ:
Յեւ այնուհետեւ թըշնամին ուզեց
Քո իսկ ձեռքերից քո գլուխը խըլել,
Սակայն վորդիբըդ անձնուրաց ու մեծ՝
Սկրսեցին նըրանց առաջը կանգնել...
Կար ժամանակ, յերբ քո կանչի վըրա
Հայրենի դրոշն եր ազատ ծածանվում,
Յեւ կըտրիմների բանակը հրսկա՝
Թըշնամու դիմաց ի մի հավաքվում:
Կար ժամանակ, յերբ նըրանք բեզ համար
Մահ եյին գըրկում,—խընճույք համարում,
Յեւ հայրենիքի վառ սիրով անմար՝
Ռազմի դաշտերում իրար հետ մըրցում:
Իսկ հիմի ել ի՞նչ, են որերն անցան,
Մարվեցին և այն սըրտերն ամեհի,
Յեւ մեր հայրերի գործերը պայծառ՝
Այժմյան վորդիբըդ չեն հիշում իսկի:

XXII—XXIII

.....

XXIV

«Ապականվել ե և՛ ուժ, և՛ կորով, հըզոր կամըր մեր,
Կյանքը բարգավաճ վերափոխվել ե և փոշի դարել,
Յեւ կարծես հիմա նա իր հունի մեջ, կանգնել ե, սառել...
Սակայն նա մի որ մեծ զարդ ե յեղել լայն ճամբաների,
Շատ անգամ իզուր, շատ անգամ և լուրջ շըփոթվել, հուզվել,
Բայց ցավը վրացու միշտ նըկատվել ե նրա դեմքին արի...
Հոսել ե նա միշտ մերթ տանջանքներով, մերթ հաճույքներով,
Յերբեմն ընկել ե, յերբեմն իսկ նորից հարութուն առել,
Յերբեմն ել նախանձ և թըշնամութուն խառնվել են կըրքով,
Նա ել նրանց միջից ծընվել ե, սընվել ու հըզորացել:
Նրա ափերն այնժամ փորված ու շինված՝ քանդվել են արդեն,
Յեւ հըզոր կյանքի այն ալիքները փռվեցան անկալած
Այլ և այլ ճյուղով անցել են ահա՛ թափվել դեռ ու դեն,
Ժըխտել են նախնյաց աշխատանքները արյունով ներկած:
Ել յե՞րբ պիտ տեսնեմ յես այս յերկիրը հիասքանչ ծաղկած,
Իր բեկորների, հին կյանքի վըրա նորից կյանք առած:
Անհաղթ պայքարը ընկած զանազան միությունների,
Մեկ տեղ, մի հոգով ապրելու տենչը վեհ հոգիների
Յերբ այս ճյուղերը մի կյանք-գոյութեան, այժմ բաժանվեն,
Մի մեծ գետ դառած՝ իրար միանան և համախըմբվեն,
Յե՞րբ այն վերամբարձ հըզոր Կովկասի ցեղերը զատված՝
Մի գաղափարով և մի իղձերով իրար հետ ձուլվեն:
Վեհ ազատութեան շողերը պայծառ հըզոր ջերմութեամբ
Յե՞րբ պետք ե հալեն, մաշեն, ջախջախեն շըղթաները հին,
Յե՞րբ պիտ պարծենա վրացի լինելը փայլուն վեհութեամբ
Աշխարհի առաջ ամեն մի վրացու սըրտակից վորդին»:

XXV

Հենց այս ժամանակ վորոտաց ուժգին,—
Նրա ծայրը ահեղ հընչեց լեռներում,
Յերկրներում կայծը գալարվեց կըրկին՝
Յեւ լուսավորեց ծեր գետը ձորում:
Սեւ ամպը յեկավ, յերկինքը ծածկեց,
Լեռ ու դաշտերին մըշուշը պատեց:
Սար ու ձորերում վռունաց և բամին,—
Բուքի սուները յերկինքը հանեց,

Քար եր պոկոտում ցասումով ուժգին,
 Հեղեղն ել վերից ահա ցած նետվեց.
 Յեւ իսկույն ահա բընությունն անդորր
 Մութ ու խավարին մի դժոխք դարձավ,
 Կըրակն ու ջուրը, վորոտը հըզոր՝
 Իրար խառնվեցին, իրարով անցան:
 Այնժամ նայեցի հըսկա Մղինվարին...
 Յեւ այն ծեր մարդուն փընտռեցի յերկար,
 Սակայն այն խավար ամպերի շերտին
 Չոկարաց հաղթել իմ աչքը տըկար...
 «Տեսիլքը սրանով մի՞թե վերջացավ», —
 Իմ սիրտը վողբաց, իմ մըտքով անցավ,
 Սակայն քիչ հետո՝ յերկինքը պարզվեց,
 Ժըպտաց և լեռը, — Մղինվարըն այն մեծ,
 Պսակված արեւի շողերով շըբեղ, —
 Յեւ նորից տեսա ծերունուն այնտեղ:
 Դողդոջուն ձեռքը յերկինք եր պարզել,
 Լեռան կատարին նա ծունր եր դըրել...
 Աղոթք եր անում ծերունին պես-պես,
 Աստըծուն ահա խընդրում եր այսպես.

XXVI

«Ո՛վ, մեծ տիրամայր*, այս աշխարհն ահա բոնն ե սեփական,
 Քո խնամք ու շնորհից մի զըրկիր յերբե՛ք ես տանջված խալխին,
 Թափված արյունը մատաղ ընդունիր, հաշվի՛ր բավական,
 Վողորմած աչքըդ ել մի հեռացնի, աչքըդ այդ անգին:

Ի՞նչ վոր աշխարհը տանջվել ե այսքան, բա՛վ ե տանջանքը,
 Ուժ տուր ընկածին նորից յեղնելու, նորից հարության,
 Տուր վողորմություն և մեր անվանի անցյալի փառքը,
 Մեր զավակներին հոգի ներշնչիր ապ ու պապական:

Ո՛վ հզոր աստված, քեզ համար վրացիք մըղել են պայքար,
 Ստեղծվելու որից չըզիտեն ինչ ե անդորր ու հանգիստ,
 Յեւ վորպես մատաղ բա՛վ ե պատիժը, արյունը այսքան,
 Յեթե մեղանչել, բավել են ահա տանջվելով և խիստ:

Տո՛ւր վրացիներին հավատամք ու սեր ապրելու համար,
 Յեւ այս հրաշալի հայրենիքը մեր ծաղկեցրու նորից,

Ո՛վ, դո՛ւ, արարիչ, ծիածանը թո՛ղ արդ կապի կամար,
 Վոր ջըրհեղեղի սպասման սարսափը վերացնես խալխից...»:

XXVII

Յերկնակամարի կապույտում արագ
 Ծիածանն ահա յոթներանգ փայլեց,
 Յեւ իմ աշխարհին վաղուց յերկնառաք
 Քաղցըր հույսերի ավետիս տըվեց:
 Վառվեց զգացմունքըս կրակի պես հըզոր,
 Խոհ ու տենչերըս իրար միացան
 Յեւ այնժամ զգացի, վոր մինչեւ այսոր
 Դեռ չեյի տեսել նըման ծիածան:

26 հունվարի 1859 թ.

[Պետերբուրգ]

(վերջին խմբագրությունը 1872 թ.)

Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎԶՅԱՆ

Մ Ի Ք Ա Ն Ի Պ Ա Տ Կ Ե Ր
 Կ Ա Մ
 ԵՊԻՋՈՂ ԱՎԱԶԱԿԻ ԿՅԱՆՔԻՑ
 Պ Ո Շ Մ

Գանձքդ գու տո՛ւր աղքատներին և ազատիր ըստրուկներին,
 Կորհնեն և կըհիշատակեն այս խոսքերը քեզ ասողին:

ՇՈԹԱ ՌՈՒՄԹԱՎԵԼԻ
 Թարգմ. Լ. Մ.-Բ.

Հայրենի յերկինք պատել եր խավար,
 Սավանը տըխուր ծածկել եր աշխարհ.
 Լուսնի տակ սարից շրվաք եր ընկել
 Յեվ Ալազանի դաշտին եր թեքվել:
 Գիշերվա պահակ լուսինը հանդարտ,
 Արքայի նըման՝ անցնում եր հըպարտ:
 Զյունոտ լեռներին շողերը նայում,
 Նըրանց հետ կարծես զըրույց են անում.
 Տըխուր աշխարհին ուրախ նայելով,
 Աստղերը փայլում, ժրպտում են սիրով:
 Անտառի միջին զեփյուռը խաղում,
 Տերեփների հետ հանաք եր անում.
 Յեվ լուսնի պայծառ շողքի հանույթով
 Դաշտը գեղեցիկ անցել եր քընով.
 Ալազանն, ասես, մարդկանց արարքից
 Տըրտունջ եր հայտնում իր սըրտի խորքից.
 Սարերը լըռիկ ականջ են դընում
 Ու ծանրը մըտքի մեջ խորասուզվում:
 Յերկինք ու յերկիր կարծես թե հոգնած,
 Հանգիստ են առնում, խորը բուն մըտած.

Բայց միայն մի տեղ ծանրաբեռ մի սայլ
 Ճըռճըռում եր պինդ, զընում համարաբայլ.
 Ճըռճըռում եր նա, զարթեցնում ուղին,
 Միախառնըվում սայլորդի յերգին:
 Սայլորդը դարդոտ յերգ եր քըրթմընջում,
 Են յերգը մընաց իր սըրտի միջում՝
 Յեվ վիշտ եր բերում յերգըն իմ սըրտին,
 Յեվ ցըրում, ինչպես ամպերը քամին:
 Անտառի խորքից դեմքով ահավոր
 Դուրս յելավ հանկարծ անհայտ ձիավոր.
 Համարծակ, ազատ նա քըշեց իր ձին
 Ու խոժոռ դեմքով մոտեցավ սայլին.

— «Դու Կուղի-գորա գնացող համբան
 Կարո՞ղ ես ցույց տալ, ասա՛, սայլապա՛ն»:

— Ինչո՞ւ չե, ախպե՛ր, ինչո՞ւ չեմ կարող.
 Այ, զընա՛ եսպես, ծըռվի՛ դեպի աջ,
 Են ծորով անցի՛, են սարը տանող
 Ճամբովըն ուղիղ զընա՛ դու առաջ,
 Վերջը կըհասնես քիթը ցից լեռան —
 Հենց են ե ուզած քո Կուղի-գորան:
 Ամոթ չըլինի հարցնելը, ախպե՛ր,
 Ինչո՞ւ յես զընում եղպիսի տեղեր.
 Կարող ե քեզ հետ փորձանք պատահի —
 Գըլուխըդ իզուր կըտաս դու մահի...
 Բղահիաշվիլին ենտեղ ե լինում,
 Մի՞թե դու իսկի քեզ չես խընայում...
 Ճիշտ ե, դու ուժեղ բազուկներ ունես,
 Քո չափ տըղերանց տակին չես մընա,
 Բայց ելի կասեմ, թե քեզ խըղճում ես,
 Բղահիաշվիլուն դու մի՛ յերեվա,
 Թե չե կըխըլի վառվըռուն քո ձին,
 Մեծ վընաս կըտա քո մատաղ անծին.
 Գընդակի նըման սըրընթաց ե նա,
 Գընդակի նըման անգութ, անխընա.
 Թե արյուն ե պարտ, լավ ե ձեռք բաշես,
 Արյան վըրեժից քեզ հեռու պահես:
 — Դու արխա՛յին կաց... Հենց նրան եմ փընտում.
 Նրա սըրտի նըման՝ իմն ել ե երված.

Կապրեմ հենց ենպես, վոնց նա ե ապրում —
 Գրեխիցըս արդեն յես ծեռք եմ վերցրած...
 Ասաց, ծին շըրջեց, իսկույն սըլացավ,
 Սըմբակի ծայնից սարը ծայն տըվավ:
 Նըրա հետեվից սայլորդը նայեց,
 «Ա՛խ, յերանի՛ք բեզ» —, ասաց բըթի տակ
 Ու գլուխըն ապա նախանծով շարժեց,
 Յեզանը հոգնած զարկեց իր մըտորակ:
 Ել առաջվանից ավելի տըխուր
 Ըսկըսեց հընչել նրա յերգի մըրմուռ:
 Կուղի-գորայի մոտ կա մի անտառ —
 Ավազակի բուն, գիտեր սաղ աշխարհ.
 Անտառը թավուտ, անանցանելի,
 Մըթին եր ու խուլ, շատ սարսափելի.
 Այնտեղ եր ապրում հայտնի ամենին
 Ավազակ Կակո Բղաճիաշվիլին:
 Լուսինը վաղուց արդեն մայր մըտած,
 Խավուտ անտառում, են ծառի տակին,
 Մարդկանցից հեռու, բախտից հալածված,
 Քընած եր ըզգույշ Բղաճիաշվիլին:
 Ձին փոքրը հեռու, պատրաստ ու թամբած,
 Խոտ եր արածում մի ծառից կապած.
 Հանախ տերեվի նա խըշխըշոցից
 Նայում եր մի կողմ ականջները ցից:
 Կենդանին հանկարծ խըլըշկոտալով՝
 Գլուխը բարձրացրեց, մի կողմ նայելով,
 Լըսեց ցեղակից ծիու վոտի ծայն,
 Ձըգիտեր, սակայն, վորտեղից եր այն,
 Ել չըհամբերեց, իսկույն խըրխընջաց
 Ու շուտ զարթեցրեց տիրոջը քընած:
 Վեր թռավ Կակոն առյուծի նըման,
 Չախմախը քաշեց, պատրաստեց հրացան.
 Յեզ ի՞նչ ե տեսնում — դաշտից հեռավոր
 Յերեվաց հանկարծ ջահել ծիավոր.
 «Ասա՛ ո՞վ ես դու, ինչո՞ւ յես յեկել,
 Վո՞ր քամին ե քեզ ես կողմը բերել.
 Յեկել ես եստեղ, իբրեզ բարեկա՞մ,
 Թե՞ յեկել ես դու, իբրեզ չարեկա՞մ»:

ՁԻԱՎՈՐԸ

— Վոչ, յեկել եմ յես, իբրեզ բարեկամ:

ԿԱԿՈՆ

— Թե վոր եղպես ե, յեկել ես բարո՞վ,
 Մեր ծանոթությունն թող լինի խերո՞վ:

ՁԻԱՎՈՐԸ

— Ամե՛ն... Դո՞ւ հո չես Բղաճիաշվիլին:

ԿԱԿՈՆ

— Հրամմելըս*, յես եմ... ի՞նչ ես կամենում:

ՁԻԱՎՈՐԸ

— Կամենում եմ յես միշտ քեզ հետ ապրել,
 Միշտ քեզ հետ լինել ու քեզ հետ մեռնել:

ԿԱԿՈՆ

— Թե խոսքիդ, թե քեզ հավան եմ կենում...
 Քեզ միանգամայն հավատ ընծայում:

ՁԻԱՎՈՐԸ

— Սիրտը միշտ սըրտին, իսկ ուժը ուժին
 Շատ կըճանաչի: Դու ինձ հավատա՛ —
 Լավ ու վատ որեր կըտանեմ քեզ հետ:

ԿԱԿՈՆ

— Խո՛շ գլալդըն*, ախպեր... Կըմընաս ինձ հետ.
 Հարուստ մարդ եմ յես. ես խուլ անտառում
 Մենակ եմ ապրում ու թագավորում.
 Իմ տունն ու տեղը անտառն ե բոլոր,
 Դեռ չեմ վընասվել թշնամուց մոլոր.
 Ամեն ծառի տակ ունիմ ոթեվան —
 Վորտեղ ել մըթնում, ենտեղ եմ քընում.
 Ինձ եստեղ թեպետ պակաս ե շատ քան,
 Բայց եղ վոչընչի տեղ եմ յես դընում...
 Յես անտուն, քաղցած, յերկյուղն իմ սըրտում,
 Նապաստակի պես քընած կիսաթոն.
 Ինչպես վայրենի, ապրում եմ մենակ.
 Ձենըն ե միմիայն ընկերըս միակ:
 Եղ կյանքը թեպետ շատ ե ծանծրալի,

Ամեն բանից զուրկ շատ ե տըխրալի,
 Բայց արի ու տես — հեշտ ե անց կենում
 Ամեն բան ենտեղ, ուր մենք ենք լինում
 Մեր գրլխի տերը... Ինձնից անբաժան
 Ունիմ յերկաթե յեղբայրներ դաժան՝
 Թուր ու թափանչա, վառողի աման
 Ու հավատարիմ, անվրեպ մի հրացան...
 Կրոններս քանի ազատ են լինում,
 Յերբեր մենք իրար չենք դավաճանում:
 Ես ծին ել, ախպե՛ր, հետքս մեծացել,
 Դրժվարին ուղին ինձ հետ ե անցել:
 Շատ ենք հանդիպել մենք փորձանքների,
 Իրար հետ տարել շատ չար ու բարի:
 Յես սրանց եմ ահա միշտ ապավինել,
 Սրանք ինձ դավաճան յերբեր չեն յեղել:
 Յես ել ապերախտ յերբեր չեմ լինի,
 Իմ յեղբայրներից յերես չեմ դարձնի:
 Ուզում եմ, յեթե ճիշտըն իմանաս —
 Իմ հարրստությունն հենց ես ե, վոր կա...
 Վատություն չըկա մեր ես անտառում,
 Անարդարություն չըկա մեզանում:
 Կեղծավորի հետ անգութ եմ թեպետ,
 Բայց միշտ ախպեր եմ անկեղծ մարդու հետ:
 Դե՛, իջի՛, զընանք, ցույց տամ իմ տունը,
 Բայց դու չըծաղրես իմ աղբատ բունը:
 Ղաչաղ մարդ եմ մի ու վոչինչ չունեմ,
 Կրներես, թե քեզ համեստ ընդունեմ:
 Ձիավորն իսկույն ծիուց վեր յեկավ
 Ու սանձը գրլխից դեպի ցած բերավ:
 Ձիու ականջներն ամուր նա ծրգեց,
 Աչքերը խելոք ձեռքով փայփայեց:
 Թամբի յետեվից հանեց յափընջին,
 Ապա ցած բերավ մի լիքը խուրջին:
 Հետո նա շոյեց գավակը ձիու
 Ու տարավ իսկույն խոտ արածելու:
 Մի փոքրը հետո նորից նա յեկավ,
 Կակոյի դիմաց հանգիստ կանգ առավ:
 Յերկունս ել իրար աչքով չափեցին,

Յերկունս ել իրար լուռ հավանեցին:
 Գրնացին հանգիստ ու մի ծառի տակ
 Նըստեցին անխոս յերկար ժամանակ,
 Կարծես թե նորից իրար են դիտում,
 Ուսումնասիրում, իրար ըստուգում:
 Վերջապես Կակոն լուռթյունը խախտեց
 Ու իր հյուրի հետ խոսել ըսկրսեց:

— Թե վոր բեղամաղ ինձնից չես լինի,
 Ավելորդ հարցիս տընազ չես անի,
 Ինձ վո՞րտեղից ես, ասա՛, ճանաչում,
 Ի՞նչպես սիրտ արիր ես կողմերը գալ...

ՁԻԱՎՈՐԸ

— Ե՛, քաջ Կակոյին ո՞վ չի ճանաչում,
 Իսկի մա՞րդ կա, վոր անունը չըտա:
 Յերեխեն անգամ քեզ կըճանաչի,
 Ով չի ճանաչում, թող նա ամաչի:
 Քո մասին են միշտ ամենքը խոսում,
 Ով լեզու ունի, գովքըդ ե ասում:
 Համբավը քո մեծ, բովքըդ անհամար
 Հեքյաթ կըդառնա մեր թռռանց համար:
 Ասում են, վոր դու անվախ ես, ղոչաղ,
 Մարդկանց անարդար արարքից փախել,
 Յեկել ես եստեղ ու դառել ղաչաղ,
 Աղբատին դու միշտ սիրել ես, ոգներ:
 Թե հարուստի հետ մարդ յեղբայրանա,
 Յերբեր եղ սիրել չի նըշանակում:
 Մարդասերը միշտ համաշվում ե նա,
 Ով աղբատ մարդուն սիրում ե, ոգնում:
 Թե չես մոռացել, Արսենն եր մենակ,
 Վորը սիրել ե աղբատին անճար,
 Ոգնել ե նըրան ամեն ժամանակ,
 Կյանքը վեր դըրել անբախտի համար:
 Մարդըն իսկական հենց նա յե յեղել,
 Իսկական մարդու գրլխարկ ունեցել:
 Յերանի՛ են մոր, վոր նըրան ծընեց,
 Նըրան ծիծ տըվեց, նըրան մեծացրեց...
 Եղպես յերեխա շատ ել ուզենա,

Հիմա վոչ մի մայր ել չի ունենա...

Քեզ չեյի տեսել, բայց միշտ լըսել եմ.

Փափագել եմ շատ, ուզել շատ անգամ,

Վոր յես անպատճառ մի կերպ մոտրդ գամ,

Բայց տունուտեղըս միշտ ափսոսել եմ.

Յեվ հանկարծ աստված գըլխիս բար գըցեց—
Անիվը բախտիս այլ կերպ պըտըտվեց...

Հիմա ականջ դի՛ր՝ կասեմ ամեն բան,

Կըտեսնես, թե ինչ յեկավ իմ գըլխին,

Ինչպես խընընեց բախտըն իմ նամբան,

Ու ինչպես փոխվեց վիճակըս նախկին։

Յես դեռ տասներկու տարեկան եյի,

Յերբ մեր բատոնին* ինձ տընից հանեց,

Տանելով իր մոտ, նախըրջի կարգեց.

Յերբ ինձ հեռացրին հայրական տընից,

Սըրտիս մեջ ընկավ մի դառըն կըսկիծ.

Առանց ծընողի դըժվար եր ապրել—

Մեր տընիցը դուրս յերբեք չեմ յեղել...

Ընկերներըս յերբ ծիծաղում եյին,

Յես լալիս եյի, արտասունք թափում.

Լացըս տեսնելով, ինձ ծաղրում եյին

Ու սիրտըս քընքույշ միշտ վերափորում։

Նըրանք ել ինձ պես տընից հեռացել,

Առանց ծընողի տըխրել են, լացել.

Բայց այժմ նըրանք մոռացել եյին,

Իրանց վիճակին շուտ ընտելացել...

Իմ արտասունքից ամաչում եյի

Յեվ ընկերներից յես փախչում եյի,

Գընում եյի լուռ, նըստում թըփի տակ,

Աըտասունք թափում ծածուկ ու մենակ։

Բայց հետո ամպերն ինձնից հեռացան,

Դարդերըս բոլոր իրանց հետ տարան.

Յերբ սիրտըս մի քիչ բացվեց այնուհետ,

Յես ել հաշտվեցի դըրության իմ հետ։

Յես ուրախ եյի գիշեր ու ցերեկ՝

Համ խընդում եյի ու համ ել յերգում.

Ել չեյի հիշում մեր տունը յերբեք,

Վոչ հիշում եյի, վոչ ել կարոտում։

Տրերըս եղպես քաղցրը ու անհոգ

Անց եյին կենում ուրախ ու զըվարթ.

Ինձ չեր նեղացնում. ըստիպում վոչ վոք—

Աշխատում եյինք հանգիստ ու հանդարտ։

Իմ ընկերակից հովիվների մեջ

Մեր գործը բոլոր բաժանել եյինք,

Գիշեր ու ցերեկ համերաշխ, անվեճ՝

Կովերին նայում, պահպանում եյինք։

Հենց սարի յետեվ արեւն եր մըտնում,

Յերեվում եյին աստղեր յերկընքում,

Կովերին ցըրված հավաքում եյինք,

Բոլորին հաշվում, համարում եյինք։

Յերբ կապում եյինք բոլոր կովերին.

Կրակ եյինք անում անտառի կողքին.

Ամենքըն իրանց պաշարը բերում,

Կրակի բոլորքը նստոտում եյին,

Հանաքներ անում, ծիծաղում, յերգում,

Ծառի ծրտերին խըրտնացնում եյին։

Իսկ թե բոլորիս քունը կըհաղթեր,

Մեկը մեզանից հեքյաթ կըպատմեր։

Հենց առավոտյան ծեգըն եր բացվում,

Յերկինքն աղամլու գույն եր ըստանում—

Զարթեցնում եր մեզ մեզնից մի ընկեր,

Մեր քունը անուշ հարամ եր անում.

Կենդանացնելով մեր քընած լեռներ,

Հարայ-հըրոցով վեր եյինք կենում։

Յեվ երմկըտալով ամեն մի ընկեր

Գընում եր, բացում կապած իր կովին.

Վոմանք ել ծուլ-ծուլ տորերելով աչքեր,

Գընում եյին մի կողմ, յախընջին ուսին։

Մյուսները տըխուր յերգ եյին յերգում,

Կովերը քըշում ու դաշտը տանում։

Կովերըն իսկույն ազատ ու արծակ

Բառանչում եյին, դաշտումը ցըրվում.

Իձկ մենք յերգելով ուրախ, համարձակ,

Դեպի սարն եյինք գընում, բարձրանում.

Պաղ աղբյուրի մեջ լըվացվում եյինք,

Քուններս փախցնում, զովանում եյինք.

Թրոշկոտում եյինք, հանաքներ անում
 Ու վոտի վրրա նախաճաշ ուտում.
 Ըսկրսում եյինք հետո մենք խաղեր՝
 Կամ զբոսում զընդակ, կամ նետում քարեր:
 Կեսորվա տոթին կովերին քըշում
 Դեպի Ալազան, մենք ել նըրանց հետ...
 Իմ մանկությունից շատ բան եմ հիշում,
 Բայց բոլորն անցավ, չըբացավ անհետ...
 Հա՛, յերեկոյան ելի են կարգով
 Կրակի չորս կողմը նըստոտում նորից,
 Հեքյաթներ եյինք մենք պատմում հերթով,—
 Սիրտըս եր տըխրում եդ հեքյաթներից:
 Եսոր ել նըրանք միտըս են գալիս,
 Իմ մանուկ որեր հիշեցնել տալիս:
 Են հեքյաթներից մի հատը միայն
 Հարազատ մոր պես դարձավ սիրելի,
 Իմ սըրտին շատ բան թելադրում եր այն՝
 Կամ ուրախալի, կամ թե վըշտալի...
 Եդ մեր Արսենի, մեր բաջ Արսենի,
 Ամենքին ծանոթ, հեքյաթն եր հայտնի.
 Մրտածում եյի, հիշում Արսենին—
 Նա յեր ամեն ժամ իմ սիրտն ու հոգին:
 Յես զբավված եյի Արսենի զործով,
 Ուշքըս ու միտքըս տարված նըրանով.
 Նախանձում եյի նրրա բարության,
 Յերանի տալիս յես արսենության:
 Տեսնում ես, ախպեր, մանուկ հասակում
 Ինչ դաշտում եյի ծըլում ու ծաղկում,
 Դարդ չեյի անում յես մեր տան համար,
 Տանեցոց մասին միտք չեյի անում՝
 Դեռ մանուկ եյի անհոգ ու կայտառ,
 Իմ լավ վիճակից գոհ եյի իսպառ.
 Յեվ կարծում եյի, ամենքըն ինձ պես
 Իրանց վիճակից գոհ են իսկապես:
 Մի հայր ունեյի շատ աշխատասեր,
 Բանում եր անդուլ նա գիշեր-ցերեկ.
 Մեր գյուղում վոչ վոք, թե ջաֆե, թե ծեր,
 Հորըս պես ղոչաղ չեր բանում յերբեր...

Վոչ վարելու մեջ, վոչ ցանելու մեջ,
 Վոչ հընձելու մեջ մարդ չեր հասնում հեչ.
 Աստված ել առատ տալիս եր բարիք,
 Տունը լի յեր միշտ, չուներ մի կարիք:
 Կարծում եյի յես, թե հայրըս եդպես
 Իր բախտիցը գոհ՝ կապրի մըշտապես.
 Բայց ճակատագիրն յերեսը դարձրեց
 Ու իմ հոր բախտին նա դավաճանեց...
 Ե՛հ, դու յել, ախպե՛ր, լըսած կըլինես,
 Թե ճորտը յերեկ բախտ ե ունեցել.
 Ել չի հավատում, վաղն ել կունենա.
 Դյուղացու բախտը դու յե՞րբ ես տեսել,
 Աղայի ձեռքում յերկար դիմանա...
 Հույսը մեր սըրտի, ցանկությունը մեր
 Վըտանգված եր միշտ, սիրելի ախպեր:
 Սակայն ժամանակն անցնում եր, զընում
 Ու հորըս համար վատ որեր բերում.
 Հայրըս ծերանում, ընկնում եր ուժից
 Յեվ աշխատելու ունակությունից.
 Ու վերջիվերջո նա իսպառ հոգնեց
 Յեվ աշխատելուց ընդմիշտ դադարեց.
 Թեպետ բանելու փափագ նա ուներ,
 Բայց ել ու՛յժ չուներ, մարմինը թույլ եր:
 Ըզգում եր հայրըս, աշկարա տեսնում,
 Թե ինչպես եր նա ուժասպառ լինում.
 Քանդվում եր արդեն ոջախը զըլխին,
 Գընում եր ձեռքից տունուտեղը հին:
 Հորըս ծերության և անբախտության
 Մի ցավ ել ուրիշ նոր ավելացավ—
 Ջերմախտից հանկարծ նա հիվանդացավ,
 Քիչ մընաց հասներ նա դուռը մահվան:
 Եդ ե գյուղացու վիճակըն, ախպե՛ր.
 Թե նըրա բախտի անիվը ծըռվի,
 Ամեն բան ել միշտ թարս կըպըտըտվի:
 Յես դառա արդեն քըսան տարեկան...
 Իմ ընկերներից, պարծանք չըլինի,
 Շատ լավ գիտեյի, վոնց նայեմ մեր տան,
 Թեկուզ կըպչեյի սըրտով եդ բանին,

Ինձ չեր ել թողնի անգութ բատոնին.

Ծառայում էյի ուրիշի յես տան,

Կործանում իսպառ տունըս հայրական:

Ծեր հայրըս նիհար, հյուժված ու դեղնած,

Հիվանդությունից ուժասպառ յեղած

Մի անգամ յեկավ, դիմեց բատոնուն,

Խընդրեց, աղաչեց, վոր ինձ բաց թողնի:

Բայց նա չըխըղճաց թըշվառ ծերունուն —

Քարասիրտ եր շատ, կոպիտ, վայրենի.

Ձուներ ըզգացմունք ու սիրտ մարդկային,

Վորպեսզի խըղճար իմ խեղճ ծընողին.

Ինչ յերկարացնեմ. ազնվականի

Լավըն ի՞նչ ե, վոր վա՛տըն ինչ լինի,

— Քեզ մատաղ, — ասաց հայրըս բատոնուն, —

Մենակ չեմ կարող յես տունըս պահել...

Մի՛ նեղացրու ինձ... տ՛ուր ինձ իմ վորդուն,

Վոր կարողանամ ոջախըս փըրկել:

ԲԱՏՈՆԸ

— Ի՞նչ ես դուրս տալի: Ի՞նչ ես կամենում:

ՀԱՅՐԸ

— Քո վորդությունը: Են եմ քեզ խընդրում,

Ջաբրոյիս թողնես, տանեմ մեր տունը,

Նորոգենք մեր հին, վաղեմի բունը.

Ինչ ուզես, կըտամ, թեկուզ ծրտի կաթ.

Պարտքիս են հացը կողով կըչափեմ,

Մեկի տեղ յերկու տունըդ կըբերեմ.

Թե վերականգնենք ոջախըս նորից,

Ձենք փախչի մենք քո ծառայությունից:

ԲԱՏՈՆԸ

— Ի՞նչ, թե ոջախըդ չըվերականգնես,

Ծառայությունից դու պիտի փախչե՞ս...

Ա՛յ դու բոփակ շուն... Մի՞թե եդ եյիր

Յերկար մըտածում դու, վոր ինձ ասես:

ՀԱՅՐԸ

— Բարկությունըդ թող Թափվի իմ գըլխին,

Թե տեր լինեյի եդ մըտածմունքին...

Բայց ինքըդ դատի, գըլխին քո ղո՛ւրբան.

Թե չեմ ունենա ինքըս վոչ մի բան,

Ել ինչո՞վ պիտի քեզ հատուցանեմ

Ու ծառայություն քեզ մատուցանեմ:

Ապտված ել գիտե, վոր յես տըկար եմ,

Ընկել եմ հալից և ուժասպառ եմ,

Ձեմ կարող մենակ աշխատանք անել —

Յես անդամալույծ, անպետք եմ դառել...

Թե չե քեզ յերբեր իմ վորդու համար

Ձեյի հանդըզնի եսպես նեղացնել:

Յերբ կարող եյի, աշխատում եյի,

Տունուտեղըս միշտ յես պահում եյի.

Ձեյի խընայում իմ ուժը յերբեր,

Ջանք եյի թափում գիշեր ու ցերեկ:

Բայց ժամանակըս արդեն անց կացա՛լ,

Հարաքաթըս վողջ իսպառ կըտըրվեց,

Ծերացա շուտով, հասակըս անցավ:

Յերբ ջանից ընկա, ամեն բան փոխվեց —

Ել յես չեմ կարում նայել ոջախիս,

Ձեմ կարում նայել իմ տուն ու տեղիս:

Ոջախըս արդեն ծեռքիցըս գընում,

Ուզում եմ փըրկել — չեմ կարողանում...

Աղաչո՛ւմ եմ քեզ, քո չա՛րը տանեմ,

Դու մի՛ կործանի ոջախըս սարքած,

Քանի վոր նըրա տերը չի մեռած:

Իմ կյանքըն ամբողջ յես վեր եմ դըրել,

Գըրտինք եմ թափել, տուն ու տեղ սարքել:

Դամարըս, կուռըս յես բեզարացրել.

Տարել եմ ծանրը իմ լուծը դըժվար

Իմ տուն ու տեղի, ոջախի համար:

Ենքան նեղություն, ջափա յեմ բաշել,

Յերկար տարիներ իմ կյանքը մաշել.

Մի՞թե, բատոն, եդ նըրա համար,

Վոր սեվ որ տեսնեմ, վոր թաղեմ իսպառ

Իմ մեծացրածին եսպես վաղաժամ:

Մի՛ անի եղպես, քեզ մա՛տաղ լինեմ,

Բաց թող յերեխիս, վոր հետըս տանեմ:

ԲԱՏՈՆԸ

— Կովերըս հետո յես ու՞մը հանձնեմ,
Կարգին տավարած ել վո՞րտեղ հարեմ.
Ձե՛, չի՛ կարելի, չե՛մ տա Ձաքրոյին,
Ոջախըդ թեկուզ քանդվի հիմնովին...
Տեսնո՞ւմ ես հալա եղ ծերին բուխակ—
Իր շահն ե փրնտուում իմի փոխանակ.
Ձե՛, չե՛... Ասված ե՛ «եսորվա փուշը
Ավելի լավ ե, քան վաղվա նուշը»...

ՀԱՅՐԸ

— Իմըն ինձ լինի, բոնը բեզ լինի,
Ձա՛նըս բեզ մատաղ, ա՛յ իմ բատոնի:

ԲԱՏՈՆԸ

— Գընա՛, հեռացի՛, զա՛հլա մի տանի:

ՀԱՅՐԸ

— Գընամ, հեռանամ, ել ումը դիմեմ.
Ինձ, կործանվածիս, ով պիտի ոգնի,
Ոջախըս ինչպես յես կարգի բերեմ.
Թե վոր չես թողնի իմ վորդուն տանեմ,
Ասա՛, բատոնո, գընամ, ի՞նչ անեմ:

ԲԱՏՈՆԸ

— Ի՞նչ պիտի անես,— գլուխըդ բա՛րին տու,
Ցես դարդ չեմ անի, թեկուզ մեռնես դու:

ՀԱՅՐԸ

— «Գլուխըդ բարին տու», եղ ի՞նչ պատասխան,
Վո՞նց կարելի յե ասել եղպես բան...
Մենք ել մի մարդ ենք մեր գեղամիջում,
Ուտել ենք ուզում, ապրել ենք ուզում...

ԲԱՏՈՆԸ

— Սո՛ւս... դու քո՛ փակչուն... ձե՛նըդ դու կրտրի...
Թե չե՛... չեմ նայի յես քո ծերության.

Հենց եչ քո ձեռիդ մահակը կառնեմ,
Խոսքերդ նորից բուկըդ կրկոխեմ...

ՀԱՅՐԸ

— «Վո՞նց թե կրկոխես... ինձ սոված սպանում,
Ոջախըս քանդում, ինձ սաղ-սաղ թաղում,
Վորդուս չես թողնում իր հորըն ոգնի,
Ձես թողնում, վոր գա ու ջանիս հասնի.
Ձես թողնում դու իմ վորդուն հարազատ
Դուրս գա քո տընից ու լինի ազատ,
Ձես տալիս նըրան իրավունք, վոր նա
Ես ծեր հասակիս ոգնության ինձ գա,
Իսկ խոսքըն ուղիղ, խոսքը երջմարիտ
Ձես ել ինձ թողնում ասեմ յերեսիդ...
Թո՛ւ քո որենքին ու դատաստանին»...

Հենց ես եր, ախպեր, ես խոսքերն ելին,
Վոր պատճառ յեղան մեր անբախտության...
Հիմա ինձ կասես, եսպիսի խոսքեր
Հայրդ բատոնուն չըպիտի ասեր:
Հապա ի՞նչ աներ, վոր յեթե չասեր.
Են անաստվածին, են գյուղագյուղին
Ի՛նչքան եր հայրըս խընդրում, աղերսում...
Բայց խեղճ ծերունի հորըս խոսքերին
Վոչ ուշադիր եր և վոչ ել լըսում:
Հայրըս չրկարաց նրա գութը շարժել,
Քարասիրտ մարդուն մի փոքրը մեղմել.
Նա յել մի մարդ եր... ել չըհամբերեց—
Ինչ սըրտումը կար, բոլորըն ասեց:

Ձիբուխի կոթով աղան զայրացած
Ըսկըսեց ծեծել հորըս ծերացած...
Բայց պիտի ասեմ, վոր վոչ մի դեպքում
Հայրըս չեր ծեծվել իր ամբողջ կյանքում:
Շա՛տ ինքնասեր եր... Ու նա բարկացած,
Սիրտըն ամոթից տակն ու վրա յեղած,
Թեպետ ուժ չուներ, սակայն հանդըգնեց,
Իր բատոնու վրա ձեռը բարձրացրեց:
Բատոնը գոռաց. «Ե՛յ, եհպոտըներ»:
Ցեկան մի բանի յեղբայրակիցներ,

Հիվանդ հորըս վրա նրանք հարձակվելով՝
 Սկսեցին ծեծել պինդ հիպոտներով,
 Պատվին միշտ սովոր հայրըս անարգված,
 Ըզգալով մարմնին չարաչար հարված,
 Տընքում եր ուժգին... Մի՛րտըս ե երվում,
 Յերբ եղ տընքոցը միտըս եմ բերում...
 Վո՛չ հիվանդություն, վո՛չ նիհարություն,
 Վո՛չ գերմակ մորուս, վո՛չ ել ծերություն,
 Վո՛չ աստվածային, վո՛չ ել մարդկային
 Վո՛չ մի հատ որենք հորըս չոգնեցին...
 Յեա՛ վոզորմելիս՝ հենց ենտեղ եյի,
 Եղ բոլոր անցքին յես ներկա եյի...
 Զաքրոն իր թըշվառ գլուխը կախ արեց
 Ու սըրտի խորքից ծանըր ա՛խ քաշեց:
 Վեր կացավ Կակոն սաստիկ զայրացած,
 Միրտըն ու հոգին հուզված, այլայլված.
 Նայեց Զաքրոյին, նայեց նա խեթ-խեթ,
 Ապա ըսկըսեց խոսել նըրա հետ.
 — «Դու ասում ես, թե հենց ենտե՞ղ եյիր»
 Վոր բոլոր անցքին դու ներկա՞ եյիր...
 Ու մինչեւ ենտեղ տարար թըշնամուն,
 Վոր ծեծել տըվիր թըշվառ ծերունո՞ւն...
 Ասա՛, թուլամո՛րթ, ի՞նչ եյիր անում,
 Քո սիրտըն են վախտ ի՞նչ եր քեզ ասում...
 Ենտեղ լինեյի յես են ժամանակ,
 Կանեյի յես ձեզ իսկու՛յն շանսատակ.
 Առաջինը՝ քեզ, հետո՛ բատոնուն—
 Զարքաշ գյուղացու անգուլթ թըշնամուն.
 Ի՞նչ, կանգնել եյիր, թամաշա՞ անում,
 Թե վոնց են քո հոր արյունը ծըծում...
 Թո՛ւ քո նամուսին, թո՛ւ քո վորդության,
 Թո՛ւ քո անունին, տըղամարդության.
 Տո՛, ա՛ջքիդ առաջ հորդդ ըսպանում,
 Դու ենտեղ կանգնած ձե՞ն չեյիր հանում...
 Ել ինչո՞ւ եյիր եղ թուրըդ կապել,
 Ի՞նչ ե, կուգեյիր դու մարդկանց խաբե՞լ,
 Ինչո՞ւ բատոնուդ չըկըտըրտեցիր,
 Անպատված թըրով ի՞նչպես սիրտ արիր

Ու յեկար Կակո դու զաչաղիս մոտ:
 Յեկել ես, ի՞նչ ե, ինձ ամաչացնե՞ս...
 Վո՛չ, իբրեւ դաչաղ, դու բանի պետք չես—
 Դու տըղամարդ չես, այլ կին ես վախկոտ.
 Ինչպես յեկել ես, ենպես ել գընա՛...

ՉԻԱՎՈՐԸ

— Ինձանից, Կակո, դու մի՛ նեղանա,
 Զաքրոյին դու դեռ լավ չես հանաչել,
 Ու դեռ շատ բան կա, վոր քեզ չեմ ասել:
 Իմ չափ տըղերանց տակին չեմ մընա,
 Վոչ ել կըփախչեմ Կակոյի թըրից.
 Իմ թըրին հեշտ-հեշտ անարգանք մի՛ տա
 Ու նըրա տիրոջ վախկոտ մի՛ ասա.
 Դու եդպես իզուր ինձ մի՛ բամբասի...
 Հիմա կըպատմեմ, դեռ ինձ լավ լըսի՛:
 Անբախտըս ենտեղ յերբ կանգնած եյի...
 Մինչեւ բատոնին ծեռքով եր ծեծում—
 Միսըս շան նըման պոկոտում եյի...
 Մի ծայն եր կարծես ականջիս ասում.
 «Ըսպանի՛»... Սակայն ինձ զըսպում եյի.
 Թե վոր սպանեյի, հայրըս կըկորչեր,
 Մեռածի հետ ել սաղին կուտեյին,
 Ու դրա պատճառը յես կըլինեյի.
 Թե չըսպանեյի, անկարելի յեր—
 Հորըս ծեծի տակ չարչարում եյին,
 Եդպես յես յերկու կրակի մեջ եյի.
 Ծերունի իմ հոր յերբ վեր գըցեցին
 Յեւ ըսկըսեցին հիպոտով ծեծել,
 Աչքերըս հանկարծ իսպառ մըթնեցին,
 Միրտըս կրակ ընկավ, ըսկըսեց երվել:
 Յես վըրա պըրծա, հրացանըս առի,
 Շուտ վեր գըցեցի ուսիս յափընջին,
 Ու յերբ բատոնին գոռում եր. «Զա՛րկի».
 Հրացանըս պայթեց հենց դոշի միջին...
 Տապալվե՛ց աղան, վոր յեղավ թե իր,
 Թե ուրիշների կորըստի պատճառ...

ԿԱԿՈՆ

— Գո ըստեղծողի յես հոգուն ղուրբան,
Տըղա յես յեղել ղու տըղի նըման...
Ա՛յ, հալալ լինի քո ծըծած կաթը,
Թող կըտրուկ լինի թըրիդ յերկաթը.
Ների՛ր ինձ, ախպեր, վոր անպատվեցի,
Քեզ ավել-պակաս խոսքեր ասացի.
Ամաչում եմ յես իմ ասածներից,
Ու քիչ ե մընում, մեռնեմ ամոթից.
Կակոն քո առաջ գլուխը խոնարհում,
Հարգանք ե հայտնում, քեզ գովաբանում:

ՁԻԱՎՈՐԸ

— Գովելու ինչ կա, վոր յեթե վորդին
Իր հոր արյունի վըրեժը հանի.
Թեկուզ անարին, թեկուզ քաջարին,
Ամեն մարդ, կարծեմ, եդ նույնը կանի:
Ավելորդ եր թե քո պարսավանքը
Յեվ թե ինձ տըված քո գովասանքը:
Բայց, ե՛հ, Կակո ջան, եդ մահից բընավ
Կոտրած իմ սըրտին հովություն չեղավ—
Հորը անծնատուր հարազատ վորդին
Չըկարողացավ ոգնել ծընողին:
Յես են րոպեյին ինձ չեյի հիշում,
Ձերբակավելուց չեյի վախենում...
Յես վըրա ընկա, զըրկեցի իմ հոր...
Բայց ընկած եր նա, անըզգա դառել.
Կապտել եր խեղճի մարմինը բոլոր,
Ճիպոտների տակ անհաղորդ մեռել...
Ե՛հ, Կակո ախպեր, ծա՛նըր ե, դըժվա՛ր,
Հիշելըն անգամ դըժո՛խը ինձ համար»:
Ասաց ու լրռեց: Չաբրոն վըշտացած
Յերեսի վըրա պառկեց վըրդովված.
Պառկած եր յերկար, տըխուր ու տըրտում,
Ձիգյարն երված ու ցավը սըրտում:

Կակոն ել տըխրեց, գլուխը քաշ արեց,
Ընդհանուր մի վիշտ նըրանց պաշարեց...
Յերկուսի սըրտում ի՞նչ եր կատարվում—
Եդ՝ ընթերցողը լավ ե հասկանում:

11 դեկտեմբերի 1860 թ.

Պետերբուրգ

Թարգմ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ճ Գ Ն Ա Վ Ո Ր

Լ Ե Գ Ե Ն Դ

(Նվիրում եմ Ուղա Ճավձավաճեյին)

I

Այնտեղ, Մղինվարի բարձրը գագաթին,
Ուր արծիվն անգամ յերբեք չի թառել,
Ուր անծրեվ ու ձյուն սառուց են դառել,
Ու չեն յենթարկվել տաք արեգակին,
Ուր առանձնացած այն խաղաղ վայրին
Ոտար ե յեղել ծայնը մարդկային,
Ուր զարկում ե միշտ կայծակ ու վորոտ,
Մըռնչում ահեղ փոթորիկ ցասկոտ—
Կրոնապաշտ մարդիկ կերտել են այնտեղ
Աստրժո տաճար, մենաստան շրթեղ:
Լեռան բարձունքում, ինչպես արծվի բուն,
Սառույցով պատած տաճարըն հրգոր
Մինչեվ հիմա յել մընում ե կանգուն,
Յեվ կոչվում ե նա «Բեթղեհեմ»՝ այսուր:
Պարբապի միջին կոփածո կա դուռ,
Իսկ դռան՝ կապած մի շղթա ամուր:
Վոչ վոր չի կարող հասնի այն դռան,
Մինչեվ չբըռնի յերկաթե շղթան:

II

Շատ հին ժամանակ այդ մենաստանում
Ապրում եր ամբողջ միաբանություն.
Հեռու աշխարհի փորձություններից:

Հեռու մարդկային ծանրը մեղքերից,
Հայրերը մեր սուրբ այստեղ են ապրել,
Աստրժոն գովել ե փառաբանել

Ու նընջել հավետ

Այլ սրբերի հետ...

Այդ վանքըն այսուր դատարկ ե մնացել,
Ժողովրդի մեջ հըռչակ ըստացել.
Դարձել ե վորպես մեծ ուխտատեղի,
Ամենքի համար մի սրբատեղի.
Ու յեթե նույնիսկ վիրավոր երեն
Այդ վանքը փախչի, ազատի իրեն,
Վորսորդըն անգամ չի հետամրտի—
Այդ սրբատեղից յերկյուղ կըկըրի:
Իսկ թե վորսորդը հանկարծ սիրտ անի,
Վիրավոր վորսին հետամուտ լինի—
Կայծակը նրան կանի շանթահար,
Մի աղընթարթում կըջընջի իսպառ:

III

Յեվ մի ժամանակ այստեղ ե յեկել
Մի բազմաչարչար, տանջված ճրգնավոր,
Վոր հեռանալով կյանքից յերկրավոր՝
Այս մենաստանում սկըսել ե ապրել:
Նա ապավինած հանդերձյալ կյանքին,
Հրաժեշտ եր տըվել բոլոր աշխարհքին,
Ուր արդարն անգամ ազատ չեր մեղքից,
Չար սատանայի փորձություններից.
Ուր հանցանքը միշտ մարդուն հետեվում,
Գողի պես նրան աչքից չեր թողնում,
Ուր գործըն արդար հանցավոր ձեռքով
Փոխարինվում եր մահածու մեղքով.
Ուր տիրում եր միշտ դավաճանություն,
Ուր յեղբայր յեղբոր խըմում եր արյուն.
Ուր տիրում եյին պատրանք ու կեղծիք,
Ջրրպարտություններ, նենգություն, չարիք:
Ուր սերը մատաղ սրբտիցը պոկում,
Ատելությունով սիրտը վարակում...
Հրաժեշտ ե տըվել այսուր այն կյանքին,

Ուր ամեն մի ծիրք, տաղանդ ու շրնորհք
Յենթարկվում է միշտ հալածանքների,
Սատանայական վորոգայթների:

IV

Նա մենումենակ այստեղ է յեկել,
Իր հոգու համար աշխարհը թողել:
Ինչ յեկել է նա, յեկած որվանից,
Հրաժարվել է միշտ ամեն մի բանից,
Թողել է ամեն տեսակ ցանկություն,
Յերկրային վայելք, իղծ ու մրտածմունք:
Նրա իղծը միակ միշտ այս է յեղել՝
Աղոթքով, վողբով իր հոգին սրբեել,
Վոր մաքուր հոգով հընար ունենա
Սուրբ դատաստանին լինելու ներկա:
Նա գիշեր-ցերեկ իր հոգու համար
Տանջել է իրան ծովով, աղոթքով,
Վողողել է նա, լալով անդադար,
Սարը սառցապատ իր արտասուքով:
Յեվ այստեղ, ինչպես արցունքի հովտում,
Նըրա սուրբ հոգին ծըլում էր, ծաղկում:

V

Մեծ չեր տարիքով: Նըրա սուրբ դեմքին
Դրոշմված էր կարծես վեհության վոգին:
Նըկատվում էր պարզ, վոր ինքըն իրան
Նըվիրել էր նա մի այլ աշխարհի:
Ու դեմքը թեպես հյուծված էր, նիհար,
Փայլում էր, սակայն, յերկնային շողով:
Խոհուն էր ու լայն ճակատը կընճոտ,
Խորիմաստ եյին աչքերըն ադոտ
Ու արտասուքը հըրճվանքով լըցված,
Կարծես թե դրախտի դռանն էր կանգնած,
Ուզում էր կարծես իր մաքուր հոգով
Ներս մըտնել շուտով դրախտի սուրբ դռնով:
Նըման էր նա այն՝ նահատակ սրբին,
Վորը աղոթքով սրբել էր հոգին:

Պահեցողությամբ մարմինը տանջել,
Զորացել հոգով և հուսով լըցվել:

VI

Յեվ երգնավորի, աղոթքըն աստված
Լըսել էր վերից, իր գուծը սըփուել,
Սուրբ մենավորին՝ խավարում փակված՝
Շնորհել էր նա լույս և մըխիթարել:
Նըրա մուծ խըցի նեղ պատուհանից
Արեվի շողք էր ընկել վերեվից:
Յերբ վանքի դիմաց լեռան զագաթին
Ժըպտում էր ուրախ վոսկեփայլ արփին,
Շողքը սյունի պես միշտ ներս էր ընկնում:
Զըգնավորըն այդ սյունին էր հենում
Իր աղոթքների գըրքույկը փոքրիկ,
Կարդում էր, լալիս, աղոթում հեզիկ:
Տիրոջ հրամանով շողքը լուսավոր
Այդ խուցն էր ընկնում, փայլում ամեն ուր...
Ապրում էր այսպես նա յերկար տարի,
Մարմինը տըկար, իսկ հոգին արի:
Անարատ էր նա, անբիծ ու արդար,
Վորին վըկա յեր այն շողքը պայծառ:

VII

Նա մի յերեկո հոգնած աղոթքից,
Կանգնած դռան մոտ, բարձրը պարըսպից
Նայում էր հեռու, կանաչ լեռներին,
Մըտնող արեվի վերջին շողերին:
Սարերի ծայրին, վորպես հըրանիվ,
Բյուր ճառագայթներ վառ ու բազմաթիվ
Կամարը յերկնի շառագույն ներկել,
Նըրան հըրեղեն մի ծով են դարձրել:
Վոսկեգոծ մի ամպ վերեվում լողում,
Յերփներանգ գույնով փայլում էր, շողում:
Վեհ ու փառավոր այս տեսարանով
Զըգնավորը մեր հափըշտակվելով,
Նայում էր մըտնող վոսկե արեվին,
Յերբ մեղմիկ փըչեց զովարար բամին:

Չովարար քամին փրչեց ու անցավ,
 Նա նորից փրչեց ու շատ սաստկացավ.
 Անցավ սարերով ու քարափրներով,
 Ճեղքված ժայռերով, խոր-խոր ծորերով.
 Ամպը սեւացավ, ամպը մեծացավ,
 Վիշապի նրման ահռելի դարձավ:
 Սեւ ամպը դաժան չարագույժ հողմից
 Ըսկըսեց շարժվել Մղինվարի կողմից:

VIII

Շարժվե՛ց, մեծացա՛վ, յերկի՛նքը պատեց,
 Վեր ամպերի հետ կըռիվ ըսկըսեց.
 Կայծակ-վորոտով գոռաց, գորգոռաց,
 Յերկինքըն ամբողջ թընդաց, դըղըրդաց:
 Յերկինքը մըթնե՛ց, սեւացա՛վ աշխարհ,
 Կարկուտ ու փայլակ միացան իրար.
 Ահավոր քամին փոթորկի փոխվեց,
 Տատանեց հիմքից աշխարհըս արար.
 Կարծես թե աստված պատժում էր մարդկանց,
 Նըրանց ծովացած մեղքերի համար:
 Հասել էր կարծես դատաստանն ահեղ,
 Ահ ու սարսափով պատում ամեն տեղ.
 Ճըգնավորը սուրբ իր խուցը մըտած,
 Ձեռները դողդոջ դեպի վեր պարզած,
 Սուրբ աստվածամոր պատկերի առաջ
 Աղոթում էր ջերմ ու լալահառաջ.
 Աղոթում էր նա աշխարհի համար,
 Վոր տերը զըթա, չըջընջի իսպառ....

IX

Յեվ հանկարծ լրսվեց մարդկային մի ծայն...
 Հայտնի չէր, սակայն, վո՞րտեղից էր այն:
 Յընցվեց նա ուժգին ու մընաց ապշած,
 Ըսկըսեց լրսել, ականջը սըրած—
 Այնտեղ, ներքեվում, պարըսպի տակին,
 Մեկը կարծես թե կանչում էր ուժգին...
 Ու նա դուրս թրուավ, նայեց դեպի ցած
 Յեվ ի՞նչ է տեսնում՝ շըղթան պինդ բըռնած,

Աղերսող ծայնով մեկը խընդրում էր,
 Վոր ներս ընդունեն, սենյակը տանեն,
 Վոր տան ապաստան խըղճուկ թըշվառին
 Բընուլթյան խառնուկ, այս ահեղ պահին...
 Ո՞վ պիտի լինի՝ արդյոք հողեղե՛ն,
 Դրժոխքի զավա՞կ, թե մի հըրեղեն:
 Յեթե մարդ է նա, այս մուլթ գիշերին,
 Արար աշխարհի կործանման ժամին,
 Ի՞նչպես է յեկել... իրանց վորջերում
 Գազաններն անգամ, պատըսպարվելով
 Ահեղ փոթորկից, յերկյուղ են կըրում,
 Իսկ ի՞նչպես է նա դուրս յեկել տընից...
 «Ո՞վ ես, ասա՛ ինձ՝ մա՞րդ ես, թե փորձի՞ց,
 Գուցե դըժոխքից ուղարկված գործի՞ց»:
 — «Յես մա՞րդ եմ՝ իսան, անտուն ու անտեր
 Աստըծո սիրույն, դու տուր ինձ պատվեր...
 Յերկինքըն ահա ուզում է փուլ գալ,
 Տակովըն անել, աշխարհին վերջ տալ.
 Ի՞նչ հարցուփորձի վախտ ես դու գըտել,
 Ըշտապի՛ր, խնդրեմ, մահից ինձ փըրկել»:

X

— «Վըտանգի ժամին, յեթե մարդ ես դու,
 Քեզ դուրսը թողնել մեղք է մահացու.
 Իսկ թե աստըծո կամքով ես յեկել
 Ու երգնավորիս ուզում ես փորձել,
 Թող այդպես լինի... այդ շըղթան բըռնի՛ր
 Ու անվախ սըրտով վերել բարձրացի՛ր—
 Այդ՝ յերկաթե պինդ յելարան է մի,
 Վոտների համար ողակներ ունի»:
 Յեվ նա գիշերվա մըթին խավարում...
 Մեծ տանջանքներով վեր է բարձրանում...
 Բայց ո՞վ է, ի՞նչ է... Մըթուլթյան միջին
 Ճըգնավորը միշտ վոչինչ չի տեսնում.
 — «Ով վոր ել լինիս, կըտամ ապաստան,
 Յե՛կ իմ հետեվից, գընա՛նք ոթեվան...
 Տանտերն է աստված... նա քեզ կընդունի,
 Ինչպես ամեն մի ոտար անտունի»:

Նա առաջնորդեց: Ու խուցը մըտան...
Բայց խավարն այնտեղ դրսիցն շատ ավել.
Չըկար վոչ մի լույս, և նույնիսկ կանթեղ,
Միայն մոխրի տակ կըրակ կար անթեղ:

XI

Քանի տիրամայրն ընդունեց նըրան,
Այստեղ յեկածին չըպատուհասեց,
Կընըշանակի, վոր ճիշտ մարդ է նա,
Վոչ թե դրժոխքի փորձիչ սատանա:
Այսպես ճըգնավորն ասաց իր սըրտում,
Իսկ հյուրը սառած դըրսեվի ցըրտում,
Իսկույն վրա ընկավ, կրակը քըրքըրեց,
Ձեռները սառած՝ տաքացնել սկըսեց.
— «Ոհո՛-հո՛-հո՛-հո՛... ցո՛ւրտ ե, ցո՛ւրտ, սառա,
Վտտով ու ձեռով յես սառուց դառա...»:
Ճըգնավորը սուրբ հանկարծ շըփոթվեց...
Կարծես աղջըկա ծայն եր, վոր լըսվեց...
Բախտըն ե գուցե աստըծո կամքով
Նըրա մոտ յեկել կանացի դեմքով,
Վոր մենավորին նա գայթակղեցնի,
Խելքահան անի, մեղքի մեջ գըցի.
Բայց բախտը յեթե փորձի յե յեկել
Աստըծո կամքով—պետք ե յենթարկվել:

XII

— «Իսկ փա՞յտ չունիս, մի քիչ բեր, վառեմ.
Եզուց սաղ մի բեռ փոխար կըբերեմ»:
Անկյունում փայտ կար, արեղան առավ,
Մոխիրը բաշեց, կրակը բաց արավ.
Ու վառված փայտի շողքիցը պայծառ
Լույսը տարածվեց սենյակում խավար:
Յերբ լույսը հյուրի յերեսին ընկավ,
Ճըգնավորը մեր հանկարծ ի՛նչ տեսավ—
Մի ջահել աղջիկ, նազելի պատկեր,
Հըմայիչ դյուլթիչ, սեվորակ աչքեր.
Հըպարտ ու սիրուն, վորպես մի յեղնիկ,
Իր վիզը թեքել, նըստել եր մոտիկ:

Աչքերից կարծես կըրակ եր թափվում
Ու վառ կըրակին մըրցակցում, կըռվում.
Յերեսի փայլից նույնիսկ կրակը վառ
Դառնում եր նըսեմ ու հաղթված իսպառ:

XIII

Թե գեղեցկության շնորհքըն ուզենար
Մարմնանալ մի կերպ ու գալ մեր աշխարհ,
Նրա դեմքիցը լավ դրժվար թե գըտներ
Ու գեղեցկություն նա արտահայտեր:
Վոչ վոք չեր կարող հայտնել իր կարծիք՝
Ի՞նչն ե ինչին դարձնում գեղեցիկ—
Շընո՞րքը դեմքին, դե՞մքը շընորհքին...
Այդ անլուծելի հարց եր դրժվարին:
Նախանձըն անգամ չեր կարող փըտնել,
Անարատ դեմքին մի արատ գըտնել.
Նըրա հիասքանչ աչքերից փայլուն,
Նըրա վառվրուռն թըշերից սիրուն
Ու շամամ կըրծքից ո՞վ պիտի լիներ,
Վոր չըսքանչանար, չըխելագարվեր...
Նայի՛ր՝ շըրթունքին... տըռփանքը կարծես
Դրոշմել ե կընիք հեզ համբույրի պես:
Այդ չըքնադությունն ամենահըզոր
Գազանին անգամ կըդարձնի անզոր...
Հըմայված, գերված ճըգնավորը մեր
Դեպի աղջըկան հառեց իր աչքեր:

XIV

Ու հարցրեց նըրան. «Ո՞վ ես դու, վորդյակ,
Ի՞նչը քեզ բերեց այս վանքը մենակ,
Այն ել այս պահուն, այս ժամին վատթար,
Յերբ քիչ ե մընում կործանվի աշխարհ»:
— «Հովվուհի յեմ ես. կանաչ սարերում
Վոչխարներ եյի յես արածացնում.
Վոչխարները մեր, գըրավելով խոտից,
Գընացին առաջ, ու յես ել հետից:
Իրիկնադեմին որըն եր սիրուն.
Յես, հիանալով արեվից փայլուն,

Տեսնելով սարի կանաչկոտ լանջին
Արեւի վոսկե շողերը վերջին,
Եւ չըկարացի աչքըս հեռացնել,
Պատկերը սիրուն մըտքիցըս հանել.
Գընացի ընդդէմ հորըս պատվերին՝
Վոր չըհավատամ Մղինվարի սարին...
Մեկ նայում ես վեր՝ արեւըն այնտեղ
Լեռան զագաթին փայլում ե շքեղ,
Ու մեկ եւ տեսար՝ յերկինքը մըթնում,
Թընդում ե հանկարծ ու հեղեղ թափում:

XV

«Շուրջըս գեղեցիկ, եւ չեյի կարում
Աչքըս հեռացնել պատկերից սիրուն.
Յերբ տարված եյի այդ տեսարանով,
Յերկինքը ծածկվեց սեւ կընծիւներով.
Հանկարծ նա մըթնեց, գըլխիս սեւացավ՝
Մըռնչաց բամին, մըրրիկ բարձրացավ:
Հոտն ուզում եյի բըշել, տանել տուն,
Բայց ինձ խանգարեց քամին գըղզըղուն.
Արճըճի նըման կարկուտը թափվեց,
Վերեւից զարկեց ու հոտըս ցըրվեց:
Չորս կողմըս բոլոր մուծըն եր կոխել,
Եւ չըկարացի յես վոտըս փոխել:
Հայրըս ասել եր, վոր յես չըխաբվեմ,
Մղինվարի սարից միշտ ըզգույշ լինեմ.
Այդ սարը գիտե մեկ-մեկ մըռայլվել
Ու դրախտը հանկարծ դըժոխքի փոխել:
Սակայն հախն ե ինձ... ինչո՞ւ խաբվեցի՝
Հորըս ասածին ականջ չարեցի...
Ասում են, ով վոր իր հոր չի լըսում,
Նա հաջողութուն յերբեք չի գըտնում:

XVI

«Արժանավոր հոր վորդիս անարժան
Եւ ի՞նչ պատասխան պիտի տամ իմ հոր...
Հայրական հոտից զըրկված ու բաժան,
Յես իմ հոր առաջ դարձա մեղավոր...»

Բայց ինքըդ դատի՛ր, փորձանքի ժամին
Եւ կըմըտածե՞ս քո հոտի մասին:
Յես հոտի մասին չեյի մըտածում,
Հայրիկիս եյի միայն մեղքանում.
Միակ վորդին եմ յես հորըս համար,
Սիրում ե նա ինձ սիրով խանդավառ.
Ցավում եյի, թե՛ իմ պատճառով նա
Պիտի նեղանա, սաստիկ վըշտանա...
Ճիշտ ե, յես կորցրի հայրական բարիք,
Հայրըս այդ բանից կունենա կարիք,
Բայց այդ նա բանի տեղ ել չի դընի,
Միայն թե նա ինձ տեսնի կենդանի:
Կարկուտի տակին կանգնած յես մըթնում
Ապաստան չեյի վոչ մի տեղ գըտնում...
Ասի՛ այս գիշեր յես այստեղ մընամ,
Կամ թե սիրտ անեմ ու մեր տուն գընամ:

XVII

«Գիշերըս յեթե դուրսը մընայի,
Ես փոթորիկին սաղ մընալ չեյի...
Իսկ թե գիշերով տունըս գընայի,
Գըլուխըս ձորում պիտի ջարդեյի...
Վերջը վըճռեցի՝ տուն վերադառնամ,
Ինչ վոր ել լինի, անպատճառ գընամ:
Բայց արի ու տես: Յես կորցրի եմբան,
Հասնելով եստեղ, բըռնեցի շըղթան...
Նոր գըլխի ընկա, վոր հասել եմ յես
Վանքը Մղինվարի, տեսնում ես ինչպես:
Լըսել եյի յես իմ հորից վաղուց,
Վոր վանք կա եստեղ մընացած հընուց.
Վոր այս վանքում կա մի սուրբ կրօնավոր,
Թողած, հեռացած կյանքից յերկրավոր...
Շատ ուրախացա, կանչեցի յերկար,
Բայց չեյի լըսում. պատասխան չըկար...
Վերջապես աստված վողորմեց, ոգնեց,
Չայնըս բարձրացրեց, ականջիդ հասցրեց.
Ինչպես փըրկեցիր դու ինձ փորձանքից,
Աստված ել թող բեզ փըրկի չարիքից»:

XVIII

— «Փըրկվելըդ, վո՛րդի, ի՛նձ մի վերագրի—
Աստված ե միակ փըրկիլ բոլորի...
Ով վոր աստրծուց յերես չի թեքում,
Աստված ել նըրան ոգնում ե, փըրկում»:
— «Դու ինձ կոչեցիր, կարծեմ, սատանա՞»:
— «Այդ խոսքից, վո՛րդի, դու մի՛ նեղանա...
Ի՞նչ գիտեյի, վոր աշխարհից մեղսոտ
Մարդ կըգա այստեղ ճըգնավորիս մոտ»:
— «Մի՞թե աշխարհում չունես ծընողներ,
Յեղբայրներ, բույրեր կամ ազգականներ»:
— «Ունեյի... բայց յես թողի բոլորին,
Անձնատուր յեղա տիրոջն յերկնային»:
— «Վաղո՞ւց ե, ինչ դու այստեղ ես յեկել»:
— «Չըգիտեմ, քանի տարի յե անցել.
Այստեղ գալուց հետ, չեմ պահում հաշիվ,
Մոռացել եմ յես ամեն տեսակ թիվ.
Քանի վոր թողի աշխարհ բովանդակ,
Ել ի՛նչ կանեմ յես թիվ ու ժամանակ»:
— «Մենա՞կ ես այստեղ դու բոլորովին»:
— «Աստըծո կամբով, այո, մենակ եմ»...
— «Աստված ի՞նչ անի, թե սառուցներում
Աշխարհից հեռու մի մարդ ե ապրում»:

XIX

«Մեղք չըհամարես ու չընեղանաս,
Յերբ ինձնից անմիտ խոսքեր իմանաս...
Յերբ մեր հոտն եյի յես այստեղ բերում,
Հորըս խոսքն եյի միշտ մըտաբերում,
Միշտ ասում եր նա. «Մղինվարի լանջին
Մի մարդ ե ապրում սառուցի միջին.
Հեռացել ե նա ու թողել աշխարհ,
Մոռացել մարմին իր հոգու համար»:
Յես միշտ ինձ ու ինձ զարմանում եյի,
Թե հոգին այստեղ ի՞նչ պիտի շահի.
Աստված չի՞ ուզում, վոր մարդիկ ապրեն
Ու իր ըստեղծած աշխարհում լինեն».

Ել ինչո՞ւ յե նա աշխարհը ստեղծել,
Կյանք ու վայելքով զարդարել, լըցրել.
Մի՞թե նրա համար, վոր անեծք կարդանք,
Ընկեր, բարեկամ թողնենք, հեռանանք.
Թողնենք զեղեցիկ կյանքը յերկրավոր,
Զըրկվենք վայելքից, դառնանք մենավոր...
Ո՛ր, այդ յես յերբե՛ք, յերբեք չեմ անի,
Իմ սիրտը մատաղ իսկի չեմ սպանի...

XX

«Կամ ի՛նչպես ես դու այստեղ դիմանում,
Աշխարհից զըրկված կյանքըդ անցկացնում.
Գիտե՞ս, թե ինչքա՛ն քաղցր ե աշխարհ,
Իսկ այստեղ՝ տըխո՛ւր, դառնությո՛ւն, խավա՛ր...
Մի՞թե չես հիշում հարազատներիդ,
Բարեկամներիդ և ընկերներիդ.
Կամ չե՞ս կարոտում քո ծընողներին,
Քո տուն ու տեղին յեվ յեղբայրներին...»
— «Ի՞նչ ասեմ, վո՛րդի, ամենից անգին
Պետք ե համարենք մեր կաշկանդ հոգին,
Վոր գերի ընկած զագիր աշխարհում
Դեգերում ե միշտ ծանրը մեղքերում»:
— «Ուրեմըն ովքեր աշխարհի մեջ ենք,
Բոլորըս զագիր, անպետք, վոչինչ ենք,
Յեվ ել չե՞նք կարող հոգին մեղսալից
Ազատել յերբեք ծանրը մեղքերից»:
— «Ազատումը միշտ ամեն տեղ ել կա,
Դըժբախտըս, սակայն, այս համբով յեկա...»

XXI

«Դըժբախտըս» բառից նա սաստիկ ցընցվեց...
Դա տըբտունջ եր մի, վոր հանկարծ նետեց,
Հառաչանք եր մի այն մարդու համար,
Վորը հավիտյան իր բախտը կորցրեց.
Մի՞թե հերիք չե, վոր նա՝ թողնելով
Մեղսոտ աշխարհի հաճույքը բոլոր,
Հեռացավ կյանքից ու այստեղ յեկավ,
Իր հոգու համար ապաստան գրտավ.

Բաժակա՞ն չեղավ, վոր հաղթահարեց
Իդոները սըրտի, իր կամքը թաղեց.
Հերի՞ք չե, վոր նա իր հոգու համար
Կառուցեց անմահ, սըրբազան տաճար...
Իսկ ի՞նչ պատահեց, այդ խոսքըն ասաց,
Ինչո՞ւ ինքն իրան նա դժբախտ ըզգաց.
Դժգո՞հ ե մի՞թե նա իր վիճակից,
Զըղջո՞ւմ ե, վոր նա հեռու յե կյանքից:

XXII

Վո՞չ: Նա աստըծուց դժգոհ չի յեղել,
Միշտ նրա համար պատրաստ ե մեռնել.
Գոհ ե արարչի այն որհնությունից,
Վոր միշտ սըփռում ե նա գըլխին վերից...
Բայց ինչի՞ց դըրդված այդ բառը ասաց:
Փորձի՛չ, սակայն, վո՞ր կողմը գընաց:
Իր շուրջը նայեց, վորոնեց յերկար,
Փորձի՛չ, սակայն, չըկա՛ր ու չըկա՛ր...
Կրակի մոտ միայն աղջիկը հոգնած
Նընջել եր անուշ, հերարծակ պառկած.
Յե՛վ շողքը կրակի, վորպես տարփածու,
Շոյում եր նրա դեմքը աննըման:
Հրաշալի՛ յեր նա, վորպես մարմնացած
Մի գեղեցկություն, տըռփանքին փարված...
Սեր, յերանություն միացած իրար՝
Կերտել են կարծես պատկեր հրաշափառ.
Յե՛վ չըքնաղությունն իր գանձըն առատ
Սըփռել եր կույսի դեմքին անարատ.
Բըլբուլըն ինչպես նրստում ե վարդին,
Սերըն ել այնպես թառել եր այտին:

XIII

Ճըգնավորը մեր աղջրկան նայեց,
Աղջիկը նրան գերեց, հըմայեց.
Նա յերկար նայեց չըքնաղ եյակին
Յե՛վ ինչվոր մի ույժ պաշարեց հոգին.
Աչքը նըրանից դարձնել ե ուզում,
Բայց աչքը նրան չի հընազանդվում:

Նայեց նա յերկար աչքերը հառած...
Քըռնկվեց կրակով նրա սիրտը վառած.
Դա այն կրակը չեր, վորը բորբոքում,
Սիրտըն եր վառում ու միշտ մորմորում...
Դա մի կրակ եր նոր, այնքա՞ն հանելի,
Այնքա՞ն անսովոր և ախորժելի,
Վոր նա իր կյանքում դեռ չի ըզգացել...
Սըրտումը յերբեք դեռ չեր ունեցել...
Լարերը սըրտի քընարի նըման
Հընչում են անուշ մի յերգ աննըման.
Ի՞նչպես հավատա նա այս անծանոթ
Նոր ըզգացմունքին հանցավոր, մեղսոտ.
Թե հանցանք ե այս, ինչո՞ւ յե նըման
Հոգուն խոստացած նա անմահության:

XXIV

Նա առաջ քայլեց... Ինչո՞ւ... Զըգիտեր.
Աղջիկը պառկած, փակած իր աչքեր,
Քընած եր անուշ. քընի մեջ տարված,
Մըտքով, ցընորքով կույսը պաշարված,
Շըրթունքը բացեց քաղցրը ժըպիտով
Յե՛վ իր ժըպիտի դյուլիչ հըմայքով
Հրավիրեց կարծես սիրո համբույրի:
Այդ կախարդական հըմայիչ պատկեր,
Ո՞վ լինի, վորին նա չըհրապուրի.
Հրեշտակըն անգամ կըխելազարվեր...
Ճըգնավորը խեղճ ել չըղիմացավ...
Գլուխը խոնարհեց, հանկարծ փետացավ...
Ո՛ր, պիղծ ցանկություն... Մի՞թե նա հաղթվեց...
Ցանկության առաջ ահա խոնարհվեց.
Վո՛չ, վո՛չ... Նա իսկի չի դավանանի,
Հավատըն յերբեք նա չի թուլացնի.
Ինչին մինչե՛վ այժմ ծըգտել ե հոգին,
Կըշարունակի նա նույնը կըրկին.
Յերբեք չի զըրկվի նա այն շընորհից,
Վոր նրա հոգին ստացել եր վերից.
Զի փոխարինի հոգին իր մարմնով,
Վոր հաղթված ե մեծ, ծանրը տանջանքով:

Այս ի՞նչ ե սակայն... «Մի՞թե պղծվեցի»...
 Այն ո՞վ ե ասում. «Ահա հաղթեցի»...
 Ո՞վ ե բրբրեղում, ինձ ծաղրը անում,
 Այս ի՞նչ չարախինդ ծայներ եմ լրսում...
 Իրականություն, թե՞ պատրանք մոլոր...
 Սարսափով նայեց իր շուրջը բոլոր,
 Բայց վոչ վոք չըկար... Աղջիկը՝ բընած,
 Իսկ ինքը հուզված նըրա մոտ կանգնած...
 Հանկարծ նա ցընցվեց, արծակեց հառաչ,
 Չոքեց տիրամոր պատկերի առաջ:
 Ահով ու դողով աղոթք եր անում,
 Վոչ մի ոգնություն նա չեր ըստանում...
 Ահ ու սարսափը առաջվա նըման
 Պաշարել էլին ու տիրել նըրան:
 Բայց նըզովվածներն դարձյալ բրբրեղում,
 Ծաղրում են անվերջ, նըրան ծանակում...
 Առ աստված. ե նա հրավիրում հոգուն—
 Հոգին չի լրսում, սիրտը՝ անտոկուն...
 Մի՞թե տիրամոր հովանու տակին
 Ել չի հանդարտվում անիծյալ մարմին...

XXVI

Յեվ նա հուսահատ նայեց դեպի վեր,
 Դեպի տիրամոր սըրբազան պատկեր...
 Բայց, ավա՜ղ, նա սուրբ աստվածածնի տեղ՝
 Իր առաջ տեսավ աղջկան շըբեղ...
 Այս ի՞նչ պատահեց, ի՞նչ փոփոխություն.
 Յերա՞զ ե, թե՞ սոսկ իրականություն:
 Գուցե սըրբազան պատկերը փոխվեց,
 Մեղավոր դեմքի հանկարծ փոխարկվեց.
 Կամ գուցե նըրան ել աստված հըզոր
 Ձի արժանացնում սուրբ աստվածամոր,
 Վորի շընորհիվ նա հաղթի կըրկին
 Մեղավոր մարմին, փըրկի իր հոգին...
 Նա խաչ ե ուզում յերեսին հանել.
 Բայց ձեռքըն, ավա՜ղ, չի կարում շարժել

Աղոթք ե ուզում անել տիրամոր—
 Կապվում ե լեզուն, նա թույլ ե, անզոր.
 Նա սուրբ պատկերին նայել ե ուզում,
 Բայց այն նըզովյալ կույսին ե տեսնում...
 «Հապա քեզ հաղթի՛ր»—մեկը շըշընջաց
 Յեվ խըցի միջին դառն բրբրեղաց...
 Ու այդ բրբրեղին նա չըղիմացավ,
 Խելագարի պես դեպի դուրս թըռավ:

XXVII

Առավոտ եր վաղ: Ջեր տըվել արեվ
 Մըշուշով պատած աշխարհին բարեվ.
 Յերկինքըն ազատ մըռայլ ամպերից
 Նայում եր հանգիստ աշխարհին վերից:
 Փըչում եր մեղմիկ հովասուն բամին...
 Այն ո՞վ ե շըրջում, վազում մոլեգին,
 Ո՞վ ե թափառում այն քարափներում,
 Մազը գըզգըզված այնտեղ դեգերում.
 Մի՞թե նա յե այն՝ մահի պես գունատ,
 Շըրջում քարերի միջին հուսահատ...
 Այո՛, նա յե, նա— ճըզնավորը մեր
 Պարսպի մոտից նայում դեպի վեր.
 Նայում եր հուզված, սակայն հուսալից
 Կարծես ոգնություն ըսպասում սարից.
 Ըսպասում եր նա արեվի ծագման...
 Այս ի՞նչ ուշացավ լույսը վաղորդյան:
 Նա, վորի համար ժամանակը դեռ
 Մինչ այս առավոտ գոյություն չուներ,
 Այժմ անհամբեր սպասում ե, նայում,
 Մի րոպեն անգամ տարի յեր թըվում...
 Ու յերբ վերջապես արեվը յելավ,
 Նա ուրախ սըրտով իր խուցը մըտավ.
 Վոսկե սյունի պես ընկել եր շողքը
 Ու լուսավորել սենյակի կողքը:

XXVIII

Յեվ նա սիրտ առած ու լի հույսերով՝
 Տիրամոր նայեց լացող աչքերով,

Ու տեսավ կըրկին սըրբազան պատկեր,
Տեսավ տիրամոր վողորմած աչքեր.
Ուրեմըն նըրան աստված չի պատժել...
Ու նա պատրաստվեց տիրոջն աղոթել.
Սուրբ գիրքըն առավ, շողինք դեմ արավ,
Բայց շողքըն հանկարծ հանգավ ու կորավ...
Ճըգնավորը խեղճ շանթահար, սառած՝
Դառնագին գոչեց և ընկավ մեռած...

Ու այնտեղ, վորտեղ սըրբերըն յերգել,
Դովել են աստծուն ու փառաբանել,
Ու արդարադատ տիրոջ նշմարիտ
Սուրբ պատարագը մատուցվել է միշտ,
Անտեր ու ավեր պատերի միջում
Քամին է այժմ մըռնչում, փրչում.
Ահեղ փոթորկից ապաստան գրտած
Դազանն է վռնում, վորտից խըրտնած...

6 փետրվարի 1883 թ.

Թարգմ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
և
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ե Լ Ե Գ Ի Ա

Գունատ շողերը բոլորած լուսնի
Իմ հայրենիքի հողն են վողողել,
Սպիտակին տըվող գիծը լեռների
Յերկնի անհունում կուլ է գընացել:

Վոչ մի տեղից ձայն, վոչ մի տեղից կանչ...
Լուռ է իմ հանդեպ յերկիրն իմ ծընող,
Միայն յերբեմըն ծանրը, հոգնատանջ
Վրացու հառաչն եմ լրսում սիրտ մաշող:

Կանգնած եմ մենակ... լեռների ըստվերն
Ասես իմ յերկրին ուրոր է ասում...
Ո՛հ, տեր իմ աստված, միշտ քընե՛լ, քընե՛լ,
Յե՛րբ կարժանանանք արդյոք զաշխհեղու...

Թարգմ. Հովհ. Կարապետյան

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Յես չեմ ուզում յերգել միայն
Վորպես թըռչուն մի կողմնակի —
Յե՛վ լոկ յերգը չե քաղցրաձայն,
Վորի համար յեկա յերկիր:

Ինձ յերկիրնքն է նըշանակում,
Ազգը սընում, վոր յես աճեմ —
Յե՛վ աստըծո հետ եմ խոսում,
Վոր իմ ազգին առաջնորդեմ:

Մեծ աստըծո հոտն ե վըսեմ
Իմ սըրտի մեջ վառվում անշեջ,
Վոր իմ ազգին ընկեր լինեմ
Թե տըխրության, թե քեֆի մեջ:

Վոր ազգի ցափն ինձ ել դադի,
Հոգիս այրվի նըրա հըրում—
Նրա ծիծաղըն, արցունքն ադի
Արձագանքեն իմ վառ սըրտում...

Այնժամ յերկնից պայծառ մի կայծ
Թե բորբոքի հուրը սըրտիս,
Այնժամ կերգեմ, այնժամ միայն
Յես կըսըրբեմ արցունքն ազգիս:

Թարգմ. Հովհ. Կարապետյան

* * *

Յես լըսում եմ յերանելի
Ձայնը ջարդվող շըղթաների.
Ճըշմարտության ձայնն ե հընչում
Ստըրկության դեմ վողջ աշխարհում:

Թե ե տալիս այս ձայնըն ինձ,
Հույս ե տալիս, վոգեվորում...
Աստված, աստված, այս ձայնն անուշ՝
Թող վոր լըսեմ և իմ յերկրում:

Թարգմ. Հովհ. Կարապետյան

ԲԱԶԱԼԵԹԻ ԼԻՃԸ

Բազալեթի լըճի խորքում,
Ասում են, կա վոսկե ուրբոց,
Յեվ նրա շուրջը ջըրերի տակ
Փթթում չըքնաղ մի ծաղկանոց:

Կանաչ ե միշտ ծաղկոցը այն՝
Յերբեք, յերբեք չի թառամում,
Այս աշխարհի ժամանակի
Փոփոխության չի յենթարկվում:

Վնչ ամառվա տոթն ե ֆլասում,
Վնչ ել ձըմռան ցուրտը նըրան,
Յեվ արևառ այն խորքերում
Տիրում ե միշտ բույրը դարնան:

Են ծաղկոցի հենց մեջտեղում
Ուրբոցն ե դըրված անշեղ,
Յեվ մարդկանցից դեռ վոչ մինը
Ձի հանդըգնել իջնել այնտեղ:

Սիրինոզներ միայն ազատ
Ուրբոցի շուրջն են լողում,
Միայն նրանք են ըզգացմունքով
Սիրում, յերգում ու գովերգում:

Այնտեղ Թամար թագուհին ե
Դըրել ուրբոցն այն՝ ասում են,
Իր արցունքի լիճն ել ազգը
Վորպես վըրան՝ գըլխին սըփռել:

Բայց թե միայն են չեն ասում՝
Ուրբոցում համն ե դըրել,
Կամ թե ազգը իր արցունքով
Ինչո՞ւ շուրջը լիճ ե կապել:

Այն մանկիկն ե գուցե պառկած
Ում անունն ե անասելի,
Ում վոր թագուն փափագում ե
Դիշեր-ցերեկ ամեն վրացի:

Թե այդպես ե, յերնեկ նըրան՝
Այն տղամարդուն, քաջ հերոսին,

Ով առաջինն ձեռք կըմեկնի՝
Կըմտենա որորոցին:

Թե այդպես ե, յերեսեկ նըրան՝
Այն վեհ մորը-հերոսուհուն,
Ով այն մանկան ինքն առաջին
Կըտա ծիծը փառքով լեցուն:

Թարգմ. Սուրեն Ավչյան

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Եջ 20. Ղիրդիսա—գուլթանի փոքր անիվը, վոր ճոճալով գլոր-
վում ե չվարած հողի վրայով:
- ” ” Լաբա—յեզան անուն ե:
- Եջ 34. Միջի փողոց—նույնը վրաց. შუა-ბაზარი (Շուա բազարի),
ռուս. Армянский базар-ը, վորը նախկին Յերևանյան
հրապարակից իջնում եր դեպի Սիոնի փողոցը,—այժմյան
Ս. Թողրիայի փողոցը:
- ” ” Դրոշկա—նույնը ռուս. дрожка, дрожки, այսինքն սայ-
լակ (ձիակառք):
- Եջ 35. Շինել—ռուս. шинель:
- ” ” Ռոքի փառաքա—ռուս. кафтан կամ шинель-ը:
- Եջ 46. Կոռ—պարհարկի տեսակը. հմմ. «կոռ ու բեղար»:
- ” ” Ղալան—հարկ:
- Եջ 49, 109. Սիրինոզ—ծովաբնակ ձուկ-աղջիկ՝ քաղցր յերգող:
- ” ” Թամար մեփե — վրաց Թամար թագուհին, 1184 — 1213
(հմմ. եջ 109):
- Եջ 64. Ծառը կենաց—խոսքն այն կիպարիսի ծառի մասին ե,
վորի հետ ավանդությունը կապում ե այսպես կոչված
«կենաց սյան» (ավետի-ցխովելիի) յերևման և նույնանուն
տաճարի հիմնադրության պատմությունը վրաց «նախա-
թոռ» Մցխեթայում:
- Եջ 65. Մակեդոնացի—խոսքը Ադեքսանդր Մակեդոնացու մասին
ե, վորն իրոք արշավել ե վոչ թե Գուրգան-Վրաստան,
այլ Վրկան-Հիրկանիա՝ Կասպից ծովի հարավում. սրա
մասին տես՝ Л. Меликсет-Беков—Введение в исто-
рию государственных образований Юго-Кавказа
[Caucasica I], Тифл. 1924 г., стр. 95 и прим. XXX
там же.

- եջ 65. Փառնավազ—վրաց իշխան կամ թագավոր՝ (IV կամ II)
դարում նախ մ. թ.:
- եջ 68. Տիրամայր—խոսքը Մարիամ «աստվածածնի» մասին և,
վորի «վիճակն» և համարվում—վրաստանն՝ ըստ ավան-
դության:
- եջ 73. Հրամանըս—այո (հայ) Հայերէն գա-
ւառական բառարան», Տփղ. 1913 թ., էջ 675):
- „ „ Խոս գլխիդն—գալի բարի, բարի գալուստ:
- եջ 76, 80 և այլն. Բառոն, Բառոնի — իշխան, պարոն, աղա, կալ-
վածատեր, ճորտատեր:

ՅԱՆԿ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ

- Ալաղան գետ և դաշտ 30, 70, 78:
- Արագվ գետ 55, 56, 70, 78:
- Բազալեթի լիճ 49, 108 (Դուշեթի ռայոնում):
- Բեթղեհեմ (Բեթլեմի) 88, հինավուրց վանք և, Մղինվար
(Ղազրեզի) ստորոտում: Մանրամասն նկարագրությունը տես՝
Ս. Մակարաբիա—«Խելի», վրացերեն, 1934 թ., էջ 234—242:
- Թբիլիսի 34, 63:
- Թերզ գետ 55, 56 (Տերեկ):
- Կովկաս 58, 67:
- Կուդի-գորա 71, 72:
- Ղվարեղի լեռներ 13 (Կախեթում):
- Մղինվար կամ Մղինվարի լյառ 53—55, 68, 88, 92, 96—98
(Ղազրեզ):
- Մցխեթա 64:
- Վրաստան 28, 56, 65, 66:
- Քուռ գետ 29, 55:

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

- Գվարելիի լեռներին** — թարգմ. Յե. Գալճյան. տպ. «Պրոլետար» 1937 № 130: Կան նաև Ն. Զարյանի փորձը՝ «խորհրդ. գրականություն» 1937 № 5:
- Գարուն** — թարգմ. Հովհ. Կարապետյան. տպ. «Կարմիր ծիլեր» 1937 № 5:
- Ծիլեր** — թարգմ. Հովհ. Կարապետյան. տպ. «Կարմիր ծիլեր» 1917 № 5:
- Մաձկալ** — թարգմ. Գ. Ասատուր. տպ. Գեորգ Ասատուր. Մերձաբևեռի գրականության պատմություն. Վրաց գրականություն. I. Նմուշներ պոեզիայից. Յերեան 1931: Կա նաև հետևյալ փորձերը — Խ. Ռադիոյի՝ Գ. Ասատուրի հիշյալ գրքում, Հովհ. Կարապետյանի՝ «Կարմիր ծիլեր» 1937 № 5, «Պրոլետար» 1937 № 121, և Արմ. Մուրվալյանի՝ «Գրական թերթ» 1937 № 15:
- Վրացու մար** — թարգմ. Հովհ. Կարապետյանի՝ «Պրոլետար» 1937 № 135:
- ** Յես աս ես ամբլի** — թարգմ. Հովհ. Կարապետյանի:
- Նամա** — թարգմ. Սուրեն Ավչյան:
- Նեգիա** — թարգմ. Հովհ. Թումանյան. տպ.՝ Հովհաննես Թումանյան, Գեղարվեստական յերկեր, Յերեվան 1934, և այլուր. Կա բազմաթիվ արտատպություններ: Հմմ. նաև Հովհ. Կարապետյանի թարգմանությունը՝ Տարբերակների բաժնում:
- Դռի ափին** — թարգմ. Հայ-Արմեն. տպ. «Արաքս», Պետերբուրգ 1893 № 1:
- Ալազանին** — թարգմ. Հովհ. Կարապետյան. տպ. «Պրոլետար» 1937 № 121:

- Յերազ** — թարգմ. Հովհ. Կարապետյան:
- Քնած աղջիկը** — թարգմ. Սուրեն Ավչյան:
- Մեակը** — թարգմ. Հովհ. Կարապետյան. տպ. «Կարմիր ծիլեր» 1937 № 5:
- Բանասեղծը** — թարգմ. Գ. Ասատուր. տպ. Նույնի՝ հիշյալ գրքում. նաև Արմ. Մուրվալյանի՝ «Խորհրդային Հայաստան» 1937 № 133: Հմմ. նաև Հովհ. Կարապետյանի թարգմանությունը՝ Տարբերակների բաժնում:
- ** Շղթաները փրփրվելու** — թարգմ. Վարդ. Սիմոնյան: Հմմ. նաև Հովհ. Կարապետյանի՝ Լուսն եմ, լուսն վաղուց ցանկալի... «Կարմիր ծիլեր» 1937 № 5: Հմմ. նաև վերջինիս մի այլ փորձը՝ Տարբերակների բաժնում:
- Վրաց ուսանողների յերգը** — թարգմ. Սուրեն Ավչյան:
- ** Յեր ինձ քախծն ե մառում անասման** — թարգմ. Սուրեն Ավչյան:
- Գարուն** — թարգմ. Հովհ. Թումանյան. տպ. նրա «Գեղարվեստական յերկեր» գրքում, և այլուր. Կա բազմաթիվ արտատպություններ: Կա նաև հետևյալ փորձերը. — Գ. Ասատուրի՝ հիշյալ գրքում, Վարդ. Սիմոնյանի՝ «Պրոլետար» 1936 № 221, Գ. Դաստակյանի՝ «Պրոլետար» 1937 № 121, Հովհ. Կարապետյանի՝ «Կարմիր ծիլեր» 1937 № 3:
- ** Այն որից ինչ վոր ա՛, իմ հայրենիք** — թարգմ. Սուրեն Ավչյան:
- ** Դու, հրաշալի իմ գրիչ** — թարգմ. Սուրեն Ավչյան. տպ. «Պրոլետար» 1937 № 121:
- 1871 թիվ 23-ը մայիսի (Կոմունայի անկման օրը)** — թարգմ. Հովհ. Կարապետյան: Կա նաև հետևյալ փորձերը. — Գ. Ասատուրի՝ հիշյալ գրքում (վոչ լրիվ), Վարդ. Սիմոնյանի՝ «Կարմիր ծիլեր» 1937 № 5 (նույնպես վոչ լրիվ) և Արմ. Մուրվալյանի՝ «Խորհրդային Հայաստան» 1937 № 134:
- Բախսավոր ազգ** — թարգմ. Լ. Մելիքսեթ-Ֆեկ:
- ** Իմ լավ յերկիր, հայրենիք** — թարգմ. Հովհ. Կարապետյան. Կա նաև հետևյալ փորձերը. — Գ. Ասատուրի՝ հիշյալ գրքում (վոչ լրիվ), և Սուրեն Ավչյանի՝ «Պրոլետար» 1937 № 121, «Արշավ» 1937 № 2:
- Բազալերի լիճը** — թարգմ. Վարդ. Սիմոնյան. տպ. «Պրոլետար» 1937 № 121: Հմմ. նաև Սուրեն Ավչյանի թարգմանությունը՝ Տարբերակների բաժնում:

* *

Ուրվագիտում—Թարգմ. Սուրեն Ավչյան:

Մի բանի պատկեր կամ եպիգրաֆ ավագակի կյանքից — Թարգմ. Հար. Թումանյան: Կա նաև հետևյալ փորձերը. — «Իլիա Ճավճավաձե, Ավագակ Կակոն (պոեմ). վրացերենից Թարգմանեց Արմ. Մուրվալյան, խմբագիրներ Գ. Ասատուր, Վեսպեր, Յերեմյան, Պետրոսյան, 1937: Մի փոքրիկ հատված սկզբնական մասից Թարգմ. Գ. Ասատուրի՝ հիշյալ գրքում. զանազան մասեր և հատվածներ Թարգմ. Հովհ. Կարապետյանի՝ «Պրոլետար» 1937 № 7, 30, «Կարմիր ծիլեր» 1936 № 10, 1937 № 5, «Արշավ» 1937 № 2:

Նույնի ամբողջական Թարգմանությունը անհայտ է:

ձգնավոր — Թարգմ. Հար. Թումանյան և Հար. Միրիմանյան: Այս պոեմի 28 գլխից վերջին 19—28 տպվեց «Պրոլետար»-ում 1937 № 107: Կա նաև այս պոեմի հին՝ արձակ Թարգմանությունը Տ. Փիրումյանի՝ «Աշխատավոր» 1919 № 211, 212:

* *

Մի՛րե մադ Ե՛ աղամորդի (կացիա-աղամորդի?) — Թարգմ. Տ. Փիրումյան՝ «Մուրճ» 1891 № 4—6:

Լուսառաք թաքառիձե. Մի քանի հատված վերջից՝ «Մի՛րե մադ Ե՛ աղամորդի» — Թարգմ. Հազարոս Կարապետյան. անհայտ:

Մուրացկանի պատմածը — Թարգմ. Տ. Փիրումյան. Թիֆլիս 1912:

Որտեղ անց այրին — Թարգմ. Հար. Միրիմանյան. դեռևս անհայտ:

Լսած խոսքեր — Թարգմ. Հովհ. Գավթյան. տպ. «Պրոլետար» 1937 № 121:

Փոքրիկ լուր — Թարգմ. Հովհ. Դավթյան. տպ. «Պրոլետար» 1937 № 121:

Կախաղանի վրա (փոքրիկ պատմվածք) — Թարգմ. Հովհ. Դավթյան. անհայտ:

Նիկալոզ Գոսսաուսիցվիլի — Թարգմ. Հովհ. Դավթյան. անհայտ:

Կապույտ Լ. Մեղիթսեթ-Բեկ

Ց Ա Ն Կ

Եջ

Ճամբարում թյան կողմից	5—6
Իլիա Ճավճավաձե (համառոտ կենսագրություն) — Լ. Մ.-Բ.	7—9

Վ Ն Ց Ա Ն Ա Վ Ո Ր Ն Ե Ր

Հվարելի լեռներին — Թարգմ. Յե. ԳԱԼՃՅԱՆ	13—14
Գարուն — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	15—16
Ծիսը — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	17—19
Մաճկալ — Թարգմ. Գ. ԱՍՏՏՈՒՐ	20—21
Վրացու մորը — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	22—23
* * * Յես շատ եմ տանջվել — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	24
Նանա — Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ	25—27
Նլեզիա — Թարգմ. Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	28
Բռի ափին — Թարգմ. ՀԱՅ-ԱՐՄԵՆ	29
Ալաղանին — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	30
Յերազ — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	31—32
Գնած աղջիկը — Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ	33
Մշակը — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	34—36
Բանաստեղծը — Թարգմ. Գ. ԱՍՏՏՈՒՐ	37
* * * Շրջապատից փռվելու — Թարգմ. ՎԱՐԴ. ՄԻՄՈՆՅԱՆ	38
Վրացի ուսանողների յերգը — Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ	39—40
* * * Յերբ ինձ թախիժն է մաշում — Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ	41
Գարուն — Թարգմ. Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	42
* * * Այն որից, ինչ վոր Ե, իմ հայրենիք — Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ	43
* * * Դու, հրաշալի իմ գլուխ — Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ	44
* * * Դու, հրաշալի իմ գլուխ — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	45
1871 թիվ 23-ը մայիսի — Թարգմ. Հովհ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ	46—47
Բախտավոր աղջ — Թարգմ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ	48
* * * Իմ լավ յերկիր, հայրենիք — Թարգմ. Հովհ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	49—50
Բազմաթիվ լիճք — Թարգմ. ՎԱՐԴ. ՄԻՄՈՆՅԱՆ	49—50

Պ Ն Ե Մ Ն Ե Ր

Ուրվական — Թարգմ. ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ	53—69
Մի քանի պատկեր կամ եպիգրաֆ ավագակի կյանքից — Թարգմ. ՀԱՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	70—87
Ճգնավոր — Թարգմ. ՀԱՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆ և ՀԱՐ. ՄԻՄՈՆՅԱՆ	88—104

Հ ա վ ե լ վ ա ծ Ե ր

	Եջ
Անտիպ տարբերակներ	107—110
Ծանոթություններ	111—112
Ցանկ աշխարհագրական անունների	113
Բիբլիոգրաֆիա—կազմ. Լ. ՄեղիֆՍեթ-Բեչ	114—116

Ո Ւ Ղ Ղ Ե Լ Ի Ք

Եջ	Տող	Տաված Ե	Արեթ լինի
45	3 ներքեվից	տըղրուկներն	դանիճներըն
67	1 »	սունեղը	սյունեղը
70	5 վերեվից	դու	դու
73	15 »	Քեզ	Քեզ
93	4 »	խառնուկ	խառնակ
104	5 »	շողինք	շողինք
114	3 »	կան	կա

4411 8 3049

ՀՀ Ազգային գրադարան



NL0388873

74.662

ყრუე 3 მძიპ.

ИЛЪЯ ЧАВЧАВАДЗЕ

ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ
В ПЕРЕВОДЕ НА АРМЯНСКИЙ ЯЗЫК
КНИГА ПЕРВАЯ
СТИХИ И ПОЭМЫ

Сахелгами
Тбилиси 1937